22-2026 ուսումնական տարի

# Գործունեության ներքին գնահատման հաշվետվություն



«Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների հ.17 հատուկ դպրոց» ՊՈԱԿ

## Մաս 1. Ընդհանուր տեղեկություններ հաստատության մասին

| Հաստատության անվանումը, համարը | «Երևանի հենաշարժողական համակարգի խախտումներ ունեցող երեխաների թիվ 17 հատուկ դպրոց» ՊՈԱԿ |
|---|---|
| Հաստատության հասցեն | ՀՀ ք Երևան Նոր Նորքի 2-րդ զանգված, Մոլդովական փ 41 |
| Հաստատության հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն | 010 646601, 010646789<br>17hatukdproc@gmail.com, |
| Հաստատության ինտերնետային կայքի հասցեն | https://mssrc.am/ |

## Մաս 2. Ընդհանուր տեղեկություններ սովորողների շարժի վերաբերյալ

### 1. Դասարանների թիվը՝ նախորդ 3 ուստարիների համար

| Դասարանների թիվը | 2023-2024 ուստարի | 2024-2025 ուստարի | 2025-2026 ուստարի | Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում) |
|---|---|---|---|---|
| 1 -ին դասարան | 2 | 2 | 2 | չկա |
| 2-րդ դասարան | 2 | 2 | 3 | աճ |
| 3-րդ դասարան | 2 | 2 | 3 | աճ |
| 4-րդ դասարան | 1 | 3 | 3 | չկա |
| 5-րդ դասարան | 2 | 2 | 3 | աճ |
| 6-րդ դասարան | 1 | 3 | 2 | նվազում |
| 7-րդ դասարան | 1 | 1 | 3 | աճ |
| 8-րդ դասարան | 2 | 1 | 1 | չկա |
| 9-րդ դասարան | 2 | 1 | 1 | չկա |
| Ընդամենը | 15 | 17 | 21 | ավելացում |

2025-2026 ուսումնական տարում դպրոցում դասարանների թիվն ավելացել է 4-ով, ինչը պայմանավորված է 2-րդ, 3-րդ, 5-րդ և 7-րդ դասարանների ավելացմամբ:

### 2. Ըստ դասարանների՝ սովորողների թիվը՝ նախորդ 3 ուստարիների համար

| Սովորողների թիվը | 2023-2024 ուստարի | 2024-2025 ուստարի | 2025-2026 ուստարի | Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում) |
|---|---|---|---|---|
| 1 -ին դասարան | 14 | 14 | 13 | նվազում |
| 2-րդ դասարան | 12 | 13 | 19 | աճ |
| 3-րդ դասարան | 15 | 16 | 20 | աճ |
| 4-րդ դասարան | 9 | 16 | 17 | աճ |
| 5-րդ դասարան | 14 | 11 | 15 | աճ |
| 6-րդ դասարան | 8 | 14 | 14 | չկա |
| 7-րդ դասարան | 8 | 7 | 16 | աճ |
| 8-րդ դասարան | 11 | 7 | 7 | չկա |
| 9-րդ դասարան | 14 | 8 | 9 | աճ |
| **Ընդամենը** | **105** | **106** | **130** | **ավելացում** |

Աշակերտների ընդհանուր թիվը 2025-2026 ուսումնական տարում ավելացել է 24-ով:

### 3. Ընդհանուր տվյալներ սովորողների վերաբերյալ՝ նախորդ 3 ուստարիների համար

| Ցուցանիշը | 2023-2024 ուստարի | 2024-2025 ուստարի | 2025-2026 ուստարի | Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում) |
|---|---|---|---|---|
| Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա սկզբին՝ տվյալ ուստարվա սեպտեմբերի 1-ի դրությամբ | 96 | 107 | 122 | աճ |
| Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա վերջին՝ տվյալ ուստարվա մայիսի 22-ի դրությամբ | 105 | 106 | 130 | աճ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ուսումնական տարվա ընթացքում ընդունված սովորողների թիվը | 13 | 11 | 11 | չկա |
| Ուսումնական տարվա ընթացքում հեռացած սովորողների թիվը | 4 | 12 | 3 | աճ |

Սովորողների ընդհանուր թիվը նախորդ ուստարվա համեմատ աճել է և՛ սեպտեմբերի 1-ի, և՛ մայիսի 22-ի դրությամբ:

**4. Տվյալներ ուսումնական հաստատության ղեկավար և վարչական կազմի վերաբերյալ**

| Պաշտոնը | Անունը, ազգանունը, հայրանունը | Տվյալ պաշտոնում աշխատելու ժամանակահատվածը | Տվյալ հաստատությունում աշխատելու ժամանակահատվածը | Պետական պարգևները, կոչումները և այլն |
|---|---|---|---|---|
| Տնօրենի ժ/պ | Անի Արմենի Գարեգինյան | 9 ամիս | 9 ամիս | - |
| Տնօրենի տեղակալ | Լիաննա Աշոտի Մանվելյան | 6 տարի 9 ամիս | 6 տարի 9 ամիս | - |
| ԿԱԴԱ համակարգող | Հայարփի Բարսեղի Մինասյան | 14 տարի | 18 տարի | - |
| Վարչատնտեսական մասի համակարգող | Լուսինե Վոլոդյայի Կիրակոսյան | 1 տարի 3 ամիս | 1 տարի 3 ամիս | |

2025-2026 ուստարում ուսումնական հաստատության ղեկավար և վարչական կազմում եղել են փոփոխություններ: 2025թ-ի մարտի 13 ին ԿԳՄՍՆ-ի հրամանով նշանակվել է դպրոցի վարչատնտեսական մասի համակարգող, իսկ սեպտեմբերի 25-ին ԿԳՄՍՆ-ի մեկ այլ հրամանով դպրոցն ունի նաև տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար:

**5. Տվյալներ ուսումնական հաստատության կառավարման խորհրդի կազմի վերաբերյալ**

| Անուն, ազգանուն, | Աշխատանքի վայրը, զբաղեցրած պաշտոնը | Կրթությունը | Հաստատության խորհրդի կազմում ընդգրկված լինելու ժամանակահատվածը |
|---|---|---|---|
| Հայկուհի Ադամյան | ԿԳՄՍՆ ՀՄԿ՝ փոխտնօրեն | բարձրագույն | 2 տարի |
| Անահիտ Մուրադյան | ԿԳՄՍՆ աշխատակազմի հանրակրթության վարչության գլխավոր մասնագետ | բարձրագույն | 2 տարի |
| Ելենա Հարությունյան | Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության գլխավոր մասնագետ | բարձրագույն | 2 տարի |
| Համեստ Փիրումյան | Թիվ 17 հատուկ դպրոցի մանկավարժ, խորհրդի քարտուղար | բարձրագույն | 2 տարի |
| Քրիստինա Խաչատրյան | Թիվ 17 հատուկ դպրոցի ծնողական խորհրդի անդամ | միջնակարգ | 2 տարի |
| Աննա Պողոսյան | ԼԽՈՒԵ կրթահամալիրի մանկավարժ | բարձրագույն | 2 տարի |
| Լուսինե Կարապետյան | ԼԽՈՒԵ կրթահամալիրի մանկավարժ | բարձրագույն | 2 տարի |
| Իրինա Պոնոմարենկո | Թիվ 11 հատուկ դպրոցի մանկավարժ | բարձրագույն | 2 տարի |
| Արմինե Փափազյան | Թիվ 11 հատուկ դպրոցի ծնողական խորհրդի անդամ | բարձրագույն | 2 տարի |
| Սաթենիկ Վարդումյան | ՏԽՈՒԵ թիվ 14 հատուկ դպրոցի ծնողական խորհրդի անդամ | միջնակարգ | 2 տարի |
| Մարինե Բաղդասարյան | ՏԽՈՒԵ թիվ 14 հատուկ դպրոցի մանկավարժ | բարձրագույն | 1 տարի |

| | | | |
|---|---|---|---|
| Քրիստինե Սիմոնյան | Թիվ 2 հատուկ կրթահամալիրի մանկավարժ | բարձրագույն | 1 տարի |
| Աննա Սահրադյան | Թիվ 2 հատուկ կրթահամալիրի ծնողական խորհրդի անդամ | բարձրագույն | 1 տարի |

## Մաս 3. Ընդհանուր տեղեկություններ շենքային պայմանների վերաբերյալ

**1. Ուսումնական հաստատության շենքի և տարածքի անվտանգ շահագործում.**

| Գնահատման չափանիշ | Արդյունք | Նկարագիր, մեկնաբանություն |
|---|---|---|
| Ուսումնական հաստատության տարածքը ցանկապատված է և անվտանգ է սովորողների ազատ տեղաշարժման համար | Այո | Դպրոցի առաջնամասում և ձախակողմյան հատվածում ցանկապատը մետաղական է, իսկ ետնամասում և աջ կողմում առկա է քարե ցանկապատ, անվտանգ է սովորողների ազատ տեղաշարժի համար |
| Ուսումնական հաստատությունն ունի տարածք՝ մեկուսացված ու հեռացված ավտոճանապարհային գոտուց, աղմուկի, օդի աղտոտման աղբյուրներ հանդիսացող արդյունաբերական կամ այլ օբյեկտներից | Այո | Դպրոցն ունի 3 ներքին բակ |
| Արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ ուսումնական հաստատության շենքին | Այո | Դպրոցն ունի 3 մուտք (դարպասներ)՝ գլխավոր և ևս 2-ը հետևի կողմում, որոնք ծառայում են արտակարգ իրավիճակներում հատուկ մեքենաների մոտենալուն |
| Ուսումնական հաստատության տարածքը մաքուր է, իսկ լաբորատորիաներում օգտագործվող այրվող և այլ վտանգավոր նյութերի թափոնները, աղբը կանոնավորապես հավաքվում են հատուկ աղբարկղերում և դուրս են բերվում հաստատության տարածքից | Այո | Լաբորատորիաներ դպրոցում առկա չեն, պայմանավորված դպրոի կարգավիճակով (հատուկ) և սովորողների ինտելեկտուալ 3-րդ, 4-րդ աստիճանի կրթական կարիքով |
| Ուսումնական հաստատության ամբողջ տարածքում պարբերաբար իրականացվում են միջոցառումներ՝ կրծողների և վտանգավոր միջատների, թափառող շների, կատուների և այլ կենդանիների դեմ | Այո | Դպրոցի տարածքում թափառող շներ և կատուներ չկան, կրծողենր դեմ տարեկան 2 անգամ իրականացվում են համապատասխան միջոցառումներ |

**2. Ուսումնական հաստատությունում սովորողների ու աշխատակազմի համար ուսումնական գործընթացի և աշխատանքի կազմակերպման համար անհրաժեշտ անվտանգության ու սանիտարահիգիենիկ նորմերի պահպանման և կազմակերպման համապատասխան ծառայություններ**

| Գնահատման չափանիշ | Արդյունք | Նկարագիր, մեկնաբանություն |
|---|---|---|
| Ուսումնական հաստատության շենքը վերանորոգված է, | Այո | Կապիտալ վերանորոգվել է 2018 թվականին |
| Ուսումնական հաստատության շենքի շահագործումը համապատասխանում է շահագործման անվտանգության նորմերին, | Այո | Ուսումնական հաստատության շենքի շահագործումն իրականացվում է գործող շինարարական և հրդեհային անվտանգության նորմերի պահանջներին համապատասխան: Շենքի տեխնիկական վիճակը հնարավորություն է տալիս ապահով կազմակերպել ուսումնական գործընթացը |
| Շենքում առկա են դեպի դուրս բացվող պահուստային ելքեր, | Այո | Դրանք ապահովում են մարդկանց անվտանգ և արագ տարհանումը արտակարգ իրավիճակների դեպքում |
| Ուսումնական հաստատությունն ապահոված է կապի և արտակարգ իրավիճակների ազդարարման համակարգով, | Այո | Կապի միջոցներ առկա են ընդունարանում, պահակակետում, տնօրենի և վարչատնտեսական համակարգողի առանձնասենյակներում: Առկա է նաև |

| | | |
|---|---|---|
| | | արտակարգ իրավիճակների ազդարարման համակարգ |
| Շենքը հարմարեցված է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք (այսուհետ՝ ԿԱՊԿ) ունեցող սովորողների անվտանգ տեղաշարժ և ուսուցում ապահովող պայմաններին (թեք հարթակներ, լայն դռներ և այլն), | Այո | Դպրոցում առկա է արտաքին թեքահարթակ գլխավոր մուտքի մոտ: 1-ին մասնաշենքի ներսում առկա է թեքահարթակ, իսկ 2-րդ և 5-րդ մասնաշենքերում կան վերելակներ |
| Ուսումնական հաստատությունն ապահովված է սարքին վիճակում գտնվող հակահրդեհային անվտանգության լրակազմով, տանիքը պատված է հրակայուն նյութերով, | Այո | Հակահրդեհային անվտանգության լրակազմ առկա է, սակայն տանիքը պատված չէ հրակայուն նյութերով |
| Ուսումնական հաստատությունում ոչ կառուցվածքային վտանգներ չկան, | Այո | Ուսումնական հաստատությունում առկա ոչ կառուցվածքային տարրերը համապատասխանում են անվտանգության պահանջներին, վտանգավոր գործոններ չեն հայտնաբերվել |
| Համակարգչային սարքավորումները, հեռուստացույցներն ամուր են տեղադրված և ամրացված են աշխատատեղերին, | Այո | Դասասենյակներում համակարգիչներ առկա չեն, իսկ աշխատասենյակներում առկա համակարգչային սարքավորումները, գրադարանում հեռուստացույցն ու մնացած տեխնիկան ապահով և անվտանգ են տեղադրված, հեռուստացույցն էլ ամրացված է պատին: |
| Անիվներով տեղաշարժվող ծանր իրերն ամրացված են հատակին, | Ոչ | Անիվներով տեղաշարժվող ծանր իրեր դպրոցում առկա չեն |
| Բաց դարակներից հեռացված են ծաղկամանները, նկարները, դեկորատիվ իրերը, | Այո | Բաց դարակների վրա տեղադրված չեն ծաղկամաններ, նկարներ, դեկորատիվ և այլ ծանր կամ կոտրվող իրեր: Ուսումնական հաստատությունում ապահովվել է ոչ կառուցվածքային վտանգների նվազեցումը՝ անվտանգության պահանջներին համապատասխան: |
| Ուսումնական հաստատության միջանցքների հատակները սայթաքուն չեն, իսկ եթե ծածկված են ուղեգորգերով, ապա դրանք ամրացված են հատակին, | Այո | Ուսումնական հաստատության միջանցքների հատակները սայթաքուն չեն, ուղեգորգեր առկա չեն |
| Ստորին հարկերի պատուհաններն ունեն շարժական մետաղյա վանդակաճաղեր, | Ոչ | Ուսումնական մասնաշենքերի ստորին հարկերի պատուհաններին վանդակաճաղեր առկա չեն, իսկ վարչական մասնաշենքի պատուհաններին ամրացված վանդակաճաղերը շարժական չեն |
| Ուսումնական հաստատության կահույքը համապատասխանում է անվտանգ կենսագործունեության պահանջներին, ամուր և բարվոք վիճակում է, | Այո | Ուսումնական հաստատության կահույքը համապատասխանում է տեղադրված է անվտանգության պահանջներին համապատասխան, ամուր է, բարվոք վիճակում և ապահով է սովորողների ու աշխատակիցների օգտագործման համար: Վտանգ ներկայացնող կամ վնասված կահույք առկա չէ |
| Ուսումնական հաստատությունում մշակված և առկա է սովորողների ու անձնակազմի տարհանման պլան, որում հաշվի են առնված նաև հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները, | Այո | Ուսումնական հաստատությունում մշակված և առկա է տարհանման պլան, որում հաշվի են առնված նաև հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները և յուրաքանչյուր դասարանի կան կցված պատասխանատուներ՝ արտակարգ իրավիճակներում տարհանումն արագ կազմակերպելու համար |

| | | |
|---|---|---|
| Ուսումնական հաստատության նախասրահում, բոլոր հարկերում, դասասենյակներում փակցված են տարհանման պլան-սխեմաները՝ համապատասխան գունային ցուցասլաքներով, | Այո | Տարհանման պլան-սխեմաները՝ համապատասխան գունային ցուցասլաքներով փակցված են բոլոր հարկերի նախասրահներում, սակայն դասասենյակներում դրանք առկա չեն |
| Ուսումնական հաստատության տարհանման ուղիներն ազատ են ավելորդ իրերից և արգելափակված չեն ծանր իրերով, | Այո | Ուսումնական հաստատության բոլոր մուտքերն ու ելքերը ազատ են ավելորդ իրերից և արգելափակված չեն ծանր իրերով |
| Ուսումնական հաստատությունում սովորողների թիվը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվներին և հաստատության լիցենզիայով սահմանված սահմանային տեղերին, | Այո | Դասարանների համալրվածությունը կազմակերպվում է՝ հաշվի առնելով սովորողների հատուկ կրթական կարիքները, անհատական առանձնահատկությունները և դրանից բխող աջակցության չափը: ՀՀ կառավարության կողմից սահմանված տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվները պահպանված են իսկ հաստատության լիցենզիայով սահմանված սահմանային տեղերի քանակը (յուրաքանչյուր օղակում 70 սովորող) լրացված է հետևյալ համամասնությամբ.<br>Տարրական դասարաններ՝ 69 սովորող,<br>Հիմնական դասարաններ՝ 61 սովորող |
| Դասասենյակներում նստարանների թիվը և դրանց միջև հեռավորությունը համապատասխանում են առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերին, | Այո | Դասասենյակները կահավորված են այնպես, որ ապահովեն յուրաքանչյուր սովորողի համար անհատական նստատեղ և դասասեղան (շարժական և ոչ սուր անկյուններով), ինչպես նաև ապահովեն սովորողների անվտանգ տեղաշարժը: Անհրաժեշտության դեպքում ապահովվում է լրացուցիչ տարածք շարժունակության սահմանափակումներ ունեցող սովորողների և օժանդակ սարքերի անվտանգ օգտագործման համար |
| Ուսումնական հաստատության սովորողները «Ֆիզկուլտուրա» առարկայի ուսումնական դասընթացներն անցկացնում են մարզադահլիճում. | Այո | Ուսումնական հաստատությունն ունի մարզադահլիճ, սակայն այն, գտնվում է հիմնական ուսումնական մասնաշենքերից հեռու և ուսումնական գործընթացում հաճախակի չի շահագործվում: «Ֆիզկուլտուրա» առարկայի դասընթացներն իրականացվում են յուրաքանչյուր մասնաշենքում գործող ընդարձակ և անհրաժեշտ մարզագույքով կահավորված սպորտային դասասենյակներում, որոնք ապահովում են ծրագրով նախատեսված պարապմունքների անվտանգ և արդյունավետ կազմակերպումը՝ հաշվի առնելով սովորողների տարիքային և հատուկ կրթական կարիքները |

**Աղյուսակ 2.1 Տվյալներ դպրոցի շենքային պայմանների, հագեցվածության և գործունեության պայմանների վերաբերյալ**

| Տարածքների անվանումը | Քանակը | Ընդհանուր մակերեսը (ք/մ) | Փաստացի գործողների քանակը | Ընդհանուր մակերեսը |
|---|---|---|---|---|
| Առանձնասենյակ | 5 | 166.90 | 5 | 166.90 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Դասասենյակ | 21 | 819 | 21 | 819 |
| Ուսուցչանոց | 1 | 57 | 1 | 57 |
| Մասնագիտական սենյակներ | 6 | 184 | 6 | 184 |
| Ֆիզկուլտուրայի սենյակ | 2 | 120 | 2 | 120 |
| Սպորտ դահլիճ | 1 | 264 | 1 | 264 |
| Դահլիճ միջոցառումների | 1 | 231.5 | 1 | 231.5 |
| Ճաշարան | 1 | 456 | 1 | 456 |
| Բուժսենյակ | 1 | 57 | 1 | 60 |
| Պետքարան | 19+7 | 890+327 | 19+7 | 890+327 |
| Լոգարան | 11 | 220 | 0 | 220 |
| Լողավազան | 1 | 160 | 0 | 166.90 |
| Հանդերձարան | 4 | 36 | 0 | 36 |
| Գրադարան | 1 | 62.7 | 1 | 62.7 |
| Տեխնիկական նշանակության սենյակ | 12 | 260 | 12 | 260 |
| Ննջարան | 1 | 36 | 0 | 0 |
| 5-րդ մասնաշենքի սենյակներ | 22 | 892 | 22 | 892 |
| Լրացուցիչ աջակցության սենյակներ (երգ, սոց, նկար, լուսայի, ՍՈՐՍ) | 14 | 456 | 14 | 456 |

Դպրոցի շենքը տիպային է, հարմարեցված է հենաշարժական խնդիրներ ունեցող երեխաների կարիքներին, առկա է վերելակ և թեքահարթակ: 2025-2026 ուստարում դպրոցի շենքային պայմանների հագեցության փոփոխություն տեղի չի ունեցել, սակայն ավելացել են դասասենյակներ՝ ինչը պայմանավորված է դասարանների թվի ավելացմամբ:

**Աղյուսակ 2.2 Տվյալներ դասասենյակներում ինքնաշեն և պատրաստի ուսումնական նյութերի դասավորվածության և թվի վերաբերյալ**

| Մասնաշենք, հարկը, դասասենյակի համարը | Դասասենյակի մակերեսը (քմ) | Մեկ սովորողին ընկնող մակերեսը (քմ) | Ուսումնա-նյութական, ուսումնա-դիդակտիկ նյութեր՝ ինքնաշեն | Ուսումնա-նյութական, ուսումնա - դիդակտիկ նյութեր՝ պատրաստի |
|---|---|---|---|---|
| 2-րդ մշ., 2-րդ հ., հ.1 (2-րդ Ա դասարան) | 36 | 5.1 | 4 | 8 |
| 2-րդ մշ., 2-րդ հ., հ.3 Հեքիաթաթերապիա | 20 | - | Առկա է բավարար քանակությամբ 13 | 18 |
| 2-րդ մշ., 2-րդ հ., հ.3 (2-րդ Բ դասարան) | 36 | 5.1 | 6 | 14 |
| 2-րդ մշ., 2-րդ հ., հ. 4 (4-րդ Բ դասարան) | 36 | 6 | 4 | 11 |
| 2-րդ մշ., 2-րդ հ.,հ. 5 (9-րդ դասարան) | 62.7 | 6.9 | 5 | 15 |
| 2-րդ մշ., 2-րդ հ., հ. 6 (8-րդ դասարան) | 36 | 5.1 | 10 | 15 |
| 2-րդ մշ., 2-րդ հ., հ. 7 (5-րդ Բ դասարան) | 36 | 7.2 | 2 | 8 |
| 2-րդ մշ., 2-րդ հ., 8 (3-րդ Գ դասարան) | 36 | 5.1 | 4 | 10 |
| 2-րդ մշ., 2-րդ հ., 9 Լուսային սենյակ | 20 | - | Առկա է բավարար քանակությամբ | 20 |
| 2-րդ մշ., 2-րդ հ., հ. 10 (3-րդ Բ դասարան) | 36 | 6 | 7 | 9 |
| 2-րդ մշ., 2-րդ հ., հ.11 (3-րդ Ա դասարան) | 36 | 5.1 | 6 | 11 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2-րդ մշ., 2-րդ հ., հ.12 Ֆիզկուլտուրայի սենյակ | 62.7 | - | Առկա է բավարար քանակությամբ | 30 |
| 2-րդ մշ., 2-րդ հ., հ. 13 (1-ին Ա դասարան) | 36 | 6 | 5 | 6 |
| 1-ին մշ., 2-րդ հ., հ. 1 (6-րդ Ա դասարան) | 36 | 5.1 | 10 | 15 |
| 1-ին մշ., 2-րդ հ., հ. 2 (2-րդ Գ դասարան) | 20 | 4 | 2 | 5 |
| 1-ին մշ., 2-րդ հ., հ. 3 (7-րդ Գ դասարան) | 36 | 7.2 | 7 | 9 |
| 1-ին մշ., 2-րդ հ., հ.4 (4-րդ Գ դասարան) | 36 | 7.2 | 5 | 8 |
| 1-ին մշ., 2-րդ հ., հ.5 (6-րդ Բ դասարան) | 62.7 | 8.9 | 12 | 10 |
| 1-ին մշ., 1-ին հ., հ. 6 (7-րդ Ա դասարան) | 36 | 7.2 | 8 | 10 |
| 1-ին մշ., 1-ին հ., հ. 7 (7-րդ Բ դասարան) | 36 | 6 | 7 | 12 |
| 1-ին մշ., 1-ին հ., հ. 8 (5-րդ Գ դասարան) | 36 | 6 | 4 | 10 |
| 1-ին մշ., 1-ին հ., հ. 9 Սնվելու սենյակ | 20 | 2.5 | - | - |
| 1-ին մշ., 1-ին հ., հ. 10 (1-ին Բ դասարան) | 36 | 5.1 | 5 | 7 |
| 1-ին մշ., 1-ին հ., հ. 11 (4-րդ Ա դասարան) | 36 | 6 | 6 | 10 |
| 1-ին մշ., 1-ին հ., հ. 12 Օգնիր սենյակ | 62.7 | | Առկա է բավարար քանակությամբ | 30 |
| 1-ին մշ., 1-ին հ., հ. 13 (5-րդ Ա դասարան) | 36 | 7.2 | 8 | 10 |
| 2-րդ մշ., 1-ին հ., հ. 1 (ուսուցչանոց) | 37+20 | | Առկա է բավարար քանակությամբ | կա |
| 2-րդ մշ., 1-ին հ., հ. 2 (բուժսենյակ) | 20+37 | | Առկա է բավարար քանակությամբ | կա |
| 2-րդ մշ., 1-ին հ., հ. 3 (էրգոթերապիա) | 36 | | Առկա է բավարար քանակությամբ | կա |
| 2-րդ մշ., 1-ին հ., հ.4 (էրգոթերապիա) | 36 | | Առկա է բավարար քանակությամբ | կա |
| 2-րդ մշ., 1-ին հ., հ. 5 (հատուկ մանկավարժ) | 20 | | Առկա է բավարար քանակությամբ | կա |
| 2-րդ մշ., 1-ին հ., հ. 6 (հոգեբան) | 36 | | Առկա է բավարար քանակությամբ | կա |
| 2-րդ մշ., 1-ին հ., հ. 7 (լոգոպեդ) | 36 | | Առկա է բավարար քանակությամբ | կա |
| 2-րդ մշ., 1-ին հ., հ. 8 (գրադարան) | 62.7 | | Առկա է բավարար քանակությամբ | կա |
| 1-ին մշ., 1-ին հ., հ. 1 (երկարօրյա խումբ) | 36 | | Առկա է բավարար քանակությամբ | կա |
| 1-ին մշ., 1-ին հ., հ. 2 (նկարչության սենյակ) | 20 | | Առկա է բավարար քանակությամբ | կա |
| 1-ին մշ., 1-ին հ., հ. 3 (երաժշտաթերապիա) | 36 | | Առկա է բավարար քանակությամբ | կա |
| 1-ին մշ., 1-ին հ., հ. 4 (սոց.կենտրոն) | 36 | | Առկա է բավարար քանակությամբ | կա |
| 1-ին մշ., 1-ին հ., հ. 5 (արտթերապիա) | 36 | | Առկա է բավարար քանակությամբ | կա |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1-ին մշ., 1-ին հ., հ. 14 (տեխնոլոգիա) | 36 | | Առկա է բավարար քանակությամբ | կա |

**Մաս 4. Ընդհանուր տեղեկություններ անվտանգ կենսագործունեության և առողջ ապրելակերպի վերաբերյալ**

**3. Ուսումնական հաստատությունում իրականացվող նպատակային ուսուցողական ծրագրեր, որոնք ուղղված են սովորողների շրջանում անվտանգ կենսագործունեության և առողջ ապրելակերպի կարողությունների ու հմտությունների ձևավորմանը.**

| Գնահատման չափանիշ | Արդյունք | Նկարագիր, մեկնաբանություն |
|---|---|---|
| Ուսումնական հաստատության անձնակազմը և սովորողները տիրապետում են արտակարգ իրավիճակներում գործելու վարքականոններին, | Այո | Ուսումնական հաստատության անձնակազմը և որոշ սովորողներ ծանոթ են արտակարգ իրավիճակներում գործելու վարքականոններին: Դպրոցում իրականացվում են անվտանգության կանոնների իրազեկման աշխատանքներ, գործնական վարժանքներ, սակայն սովորողների առանձնահատկություններից ելնելով՝ նրանց մեծ մասն ի վիճակի չէ ինքնուրույն կատարել գորոծողություններ և անհրաժեշտության դեպքում նախատեսվում է մանկավարժական և աջակցող անձնակազմի օգնությունը՝ բոլոր սովորողների անվտանգ տարհանումն ապահովելու համար (տես՝ աղյուսակ 3. 1) |
| Ուսումնական հաստատության անձնակազմը և սովորողները տեղեկացված են հաստատությունում առկա անվտանգության միջոցների (էլեկտրական վահանակ, հրշեջ-տեղեկատու, հրշեջ-ծորակ և այլն) գտնվելու տեղերի վերաբերյալ ու տիրապետում են դրանց օգտագործման կանոններին, | Այո | Ուսումնական հաստատության անձնակազմը տեղեկացված է հաստատությունում առկա անվտանգության միջոցների գտնվելու տեղերին, մասամբ ծանոթ է դրանց օգտագործման կանոններին, իսկ սովորողները հատուկ կրթական կարիքներով և անհատական կարողություններով պայմանավորված այդ տեղեկատվությանը չեն տիրապետում և ի վիճակի չեն օգտագործել դրանք ինքնուրույն |
| Հաստատությունում իրականացվում են տեղական վտանգների գնահատման և աղետներին պատրաստվածության վերաբերյալ տարաբնույթ միջոցառումներ, | Ոչ | Տեղական վտանգների գնահատման և աղետներին պատրաստվածության վերաբերյալ համակարգված միջոցառումներ չեն իրականացվում |
| Ուսումնական հաստատությունում առկա է աղետներին պատրաստվածության, քաղաքացիական պաշտպանվածության պլան, և ուսումնական տարվա ընթացքում գործարկվում է պլանը, իրականացվում են վարժանքներ, վարվում է գրանցամատյան, | Այո | Աղետներին պատրաստվածության և քաղաքացիական պաշտպանության պլան առկա է: Ուսումնական տարվա ընթացքում իրականացվում են գործնական վարժանքներ և միջոցառումներ ԱԻՆ-ի հետ համատեղ: Միջոցառումների կազմակերպման ընթացքում հաշվի են առնվում սովորողների հատուկ կրթական կարիքները, և նախատեսվում է մանկավարժական ու աջակցող անձնակազմի աջակցությունը՝ բոլոր սովորողների մասնակցության ապահովման ու անհրաժեշտության դեպքում տարհանում ապահովելու համար |
| Ուսումնական հաստատությունն ապահովված է լոկալ ջեռուցման անվտանգ համակարգով, | Այո | Ջեռուցման համակարգն աշխատել է անխափան: Ջեռուցման մեկնարկը 2025-2026 ուստարում՝ նոյեմբերի 4-ին, ավարտը՝ ապրիլի 1-ը |
| Ուսումնական հաստատության բոլոր դասասենյակներում առկա են ջեռուցումն ապահովող մարտկոցներ, և ջեռուցման ամիսներին դասասենյակներում ջերմաստիճանը համապատասխանում է սանիտարահիգիենիկ նորմերին, | Այո | Դասասենյակների միջին ջերմաստիճանը եղել է նորմերին համապատասխան՝ 19-21% |

| | | |
|---|---|---|
| Ուսումնական հաստատության միջանցքները ջեռուցվում են, և միջանցքներում ջերմաստիճանը համապատասխանում է սանիտարահիգիենիկ նորմերին, | Այո | Դպրոցի միջանցքները ևս ջեռուցվում են և միջին ջերմաստիճանը եղել է 17-19% |
| Ուսումնական հաստատությունն ապահովված է շուրջօրյա հոսող խմելու ջրով, | Այո | Ջրամատակարարումը կենտրոնացված է, ուսումնական հաստատությունն ապահովված է շուրջօրյա հոսող խմելու ջրով: Խմելու ջրի հասանելիությունն ապահովված է սովորողների և աշխատակիցների համար, պահպանվում են ջրամատակարարման և հիգիենիկ պայմանների ապահովման պահանջները |
| Ուսումնական հաստատության բոլոր հարկերում առկա են առանձնացված վերանորոգված սանհանգույցներ՝ տղաների և աղջիկների համար, | Այո | Ուսումնական հաստատությունն ապահովված է անհրաժեշտ սանիտարա-հիգիենիկ նորմերին համապատասխան պայմաններով, առկա են տղաների և աղջիկների համար նախատեսված առանձնացված, վերանորոգված սանհանգույցներ: Դրանք ապահովված են անհրաժեշտ հարմարանքներով և համապատասխանում են հիգիենիկ և անվտանգության պահանջներին (տես՝ աղյուսակ 3. 2) |
| Ուսումնական հաստատության բոլոր սանհանգույցներն ապահովված են շուրջօրյա հոսող ջրով և հիգիենայի պարագաներով (օճառ, թուղթ և այլն), | Այո | Բոլոր սանհանգույցներն ապահովված են շուրջօրյա հոսող ջրով և հիգիենայի պարագաներով՝ հեղուկ օճառ, թուղթ |
| Հաշմանդամություն ունեցող անձանց համար կա հարմարեցված սանհանգույց, որի մոտ առկա է հաշմանդամության տարբերանշանը, | Այո | Շենքը տիպային է և հարմարեցված, սանհանգույցներում առկա են բռնակներ՝ հաշվի առնելով հատուկ կրթական կարիքներ ունեցող սովորողների կարիքները և ապահովված են հնարավորինս մատչելի և անվտանգ օգտագործման պայմաններով, տարբերանշաններ սանհանգույցների դռներին ևս առկա են |
| Ուսումնական հաստատությունում առկա է սննդի կետ, որը համապատասխանում է սանիտարահիգիենիկ պայմաններին, | Այո | Ուսումնական հաստատությունում առկա է սննդի կետ, որը համապատասխանում է սանիտարահիգիենիկ պահանջներին: Սննդի կետը ապահովված է անհրաժեշտ պայմաններով, սարքավորումներով և պարագաներով: Պահպանվում են սննդի պատրաստման, պահպանման և մատուցման հիգիենիկ նորմերը, իրականացվում է մաքրության և սանիտարական վիճակի վերահսկողություն: Աշակերտները ճաշարանից օգտվում են օրական երկու անգամ: Սննունդը տրամադրվում է օրվա ռեժիմով, ճաշացանկը կազմվում է ամեն օր (տես՝ աղյուսակ 3. 3) |
| Ուսումնական հաստատության սննդի կետում փակցված են առողջ սննդակարգի վերաբերյալ համապատասխան պաստառներ, | Ոչ | |
| Ուսումնական հաստատությունում առկա է բուժկետ, և կարող է տրամադրվել առաջին բուժօգնություն. | Այո | Ուսումնական հաստատությունում առկա է բուժկետ, որը նախատեսված է սովորողների և աշխատակիցների առողջության պահպանմանն ուղղված ծառայությունների կազմակերպման համար: Բուժկետը ապահովված է անհրաժեշտ բժշկական պարագաներով և դեղորայքով, անհրաժեշտության դեպքում կարող է տրամադրվել առաջին բուժօգնություն: Իրականացվում է սովորողների առողջական վիճակի դիտարկում, բժշկական օգնության կազմակերպում և |

| | | |
|---|---|---|
| | | համապատասխան կանխարգելիչ աշխատանքներ (տես՝ աղյուսակ 3.4) |

**Աղյուսակ 3. 1**

| 2025-2026 ուսումնական տարում ուսումնական հաստատությունում աղետներին պատրաստվածության և քաղաքացիական պաշտպանվածության ուղղությամբ անցկացված միջոցառումներ | | |
|---|---|---|
| **Ամսաթիվը** | **Միջոցառման անվանումը, նկարագիրը և օգտագործված ուսումնական նյութերը և պարագաները** | **Մասնակից սովորողների և աշխատակիցների թիվը** |
| 23.09.2025 | Տակտիկական ուսումնավարժություն արտակարգ իրավիճակներում աշխատանքների կազմակերպում և իրականացում | 121 սովորող<br>90 աշխատակից |
| 16.04.2026 | Բնական աղետներից պաշտպանություն, ճիշտ վարքականոնների դրսևորում | 15 սովորող<br>8 աշխատակից |
| 07.07.2026 | Տակտիկական ուսումնավարժություն հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպում և իրականացում | 15 աշխատակից |

**Աղյուսակ 3.2**

| Հաստատության սանհանգույցները և դրանց վիճակը | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Շենքի հարկը | Սանհան-գույցների թիվը | Աղջիկների սանհանգույցի առկայությունը (ընդգծել այո կամ ոչ բառերը) | Տղաների սանհանգույցի առկայությունը (ընդգծել այո կամ ոչ բառերը) | Հիգիենայի պարագաներ ի առկայությունը (ընդգծել այո կամ ոչ բառերը) | Հարմարեցվածությունը հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին (ընդգծել այո կամ ոչ բառերը) | Վերանորոգված են, թե ոչ (ընդգծել այո կամ ոչ բառերը) |
| 1-ին հարկ | 6 | Այո<br>Ոչ | Այո<br>Ոչ | Այո<br>Ոչ | Այո<br>Ոչ | Այո<br>Ոչ |
| 2-րդ հարկ | 4 | Այո<br>Ոչ | Այո<br>Ոչ | Այո<br>Ոչ | Այո<br>Ոչ | Այո<br>Ոչ |
| Տեխնիկական հարկ | 2 | Այո<br>Ոչ | Այո<br>Ոչ | Այո<br>Ոչ | Այո<br>Ոչ | Այո<br>Ոչ |
| Վարչական մասնաշենք | 7 | Այո<br>Ոչ | Այո<br>Ոչ | Այո<br>Ոչ | Այո<br>Ոչ | Այո<br>Ոչ |

**Աղյուսակ 3.3**

| Սննդի կետի սանիտարական վիճակը՝ ըստ հակահամաճարակային ծառայության | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Սննդի կետի տեսակը (բուֆետ, ճաշարան ) | Միաժամանակ սնվելու հնարավորություն ունեցող անձնաց թիվը և տարածքը (քմ) | Սառը և տաք հոսող ջրի առկայությունը (ընդգծել այո կամ ոչ բառերը) | Լվացարանի և հիգիենայի պարագաների առկայությունը (ընդգծել այո կամ ոչ բառերը) | Տաք սննդի հնարավորությունը (ընդգծել այո կամ ոչ բառերը) | Վերանորոգված է, թե ոչ (ընդգծել այո կամ ոչ բառերը) |
| ճաշարան | 130 աշակերտ<br>456 (քմ) | Այո<br>Ոչ | Այո<br>Ոչ | Այո<br>Ոչ | Այո<br>Ոչ |

**Աղյուսակ 3.4**

| Տվյալներ ուսումնական հաստատությունում բուժկետի առկայության և բուժսպասարկման վիճակի վերաբերյալ | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Բուժկետի գտնվելու հարկը և | Բուժաշխատողների թիվը և նրանց պաշտոնները | Բուժկետում առկա գույքը | Բուժկետը վերանորոգված է, թե ոչ (ընդգծել այո կամ | Սանիտարական վիճակը | Առաջին բուժօգնության միջոցների և |

| տարածքը (քմ) | | | ոչ բառերը) | | դեղերի առկայությունը |
|---|---|---|---|---|---|
| 2-րդ մասնաշենք՝ 1-ին հարկ 57 քմ | **4 աշխատակից** 1-բժիշկ 3- բուժքույր | Առկա է | **Այո** Ոչ | Լավ | Առկա է |

4. **Ուսումնական հաստատությունում սովորողների հետ իրականացվող ֆիզիկական, հոգևոր, սոցիալական առողջությանը միտված ուսումնադաստիարակչական ծրագրեր և միջոցառումներ**

| Գնահատման չափանիշ | Արդյունք | Նկարագիր, մեկնաբանություն |
|---|---|---|
| Ուսումնական հաստատությունում իրականացվում են ծրագրեր՝ ալկոհոլի, ծխախոտի, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործման դեպքերը կանխարգելելու համար, | Ոչ | Սովորողների կարողություններով պայմանավորված նման դեպքեր չեն արձանագրվել, ուստի այս բնույթի կանխարգելիչ կամ ուսուցողական ծրագրեր չեն իրակնացվել |
| Ուսումնական հաստատությունում իրականացվում են մարմնական վնասվածքներ հասցնելու դեպքերի կանխման կամ դրանց բացահայտման աշխատանքներ, | Ոչ | Մարմնական վնասվածքների կանխման ուղղությամբ իրականացվում են վերահսկողական և կանխարգելիչ աշխատանքներ: Սովորողների առանձնահատկություններով պայմանավորված՝ հնարավոր են ինքնավնասման դեպքեր, որոնց կանխարգելման և արձագանքման համար անհրաժեշտ է մշտական աջակցություն, հսկողություն և անհատական մոտեցում, վարքային դիտարկումներ և համագործակցություն մանկավարժական ու աջակցող մասնագետների, ինչպես նաև ծնողների հետ |
| Ուսումնական հաստատությունում գործում են սովորողների նկատմամբ բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեպքերի բացահայտման, դրանց մասին զեկուցման, դրանց կանխարգելման և հանրային քննարկման մեխանիզմներ, | Այո | Ուսումնական հաստատությունում գործում են սովորողների նկատմամբ բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեպքերի կանխարգելման, բացահայտման և արձագանքման մեխանիզմներ, առկա է դրանց գրանցամատյան: Մանկավարժական և աջակցող անձնակազմը տեղեկացված է նման դեպքերի արձանագրման և համապատասխան քայլերի իրականացման կարգին: Սովորողների առանձնահատկություններից ելնելով՝ կանխարգելիչ աշխատանքներն իրականացվում են նրանց ընկալման և հաղորդակցական հնարավորություններին համապատասխան ձևերով: Դպրոցում կարևորություն է տրվում անվտանգ, աջակցող և հարգալից միջավայրի ձևավորմանը, իսկ անհրաժեշտության դեպքում ներգրավվում են հոգեբանը, հատուկ մանկավարժը և այլ մասնագետներ |
| Ուսումնական հաստատությունն իրականացնում է երեխայի խնամքի ու դաստիարակության, ընտանիքում ծնողական պարտականությունների նկատմամբ պատասխանատվության բարձրացման, ինչպես նաև բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման բացառման, երեխայի զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորման հարցերի վերաբերյալ ծնողների իրազեկման միջոցառումներ, | Այո | Ծնողների հետ կազմակերպվում են հանդիպումներ, անհատական խորհրդատվություններ և քննարկումներ՝ սովորողների հատուկ կրթական կարիքների, նրանց զարգացմանն աջակցելու, բռնության և հոգեբանական ճնշման կանխարգելման վերաբերյալ: Աշխատանքներն իրականացվում են դպրոցի մանկավարժական և աջակցող մասնագետների համագործակցությամբ՝ երեխայի լավագույն շահերի ապահովման նպատակով (տես՝ աղյուսակ 4.1) |

| | | |
|---|---|---|
| Ուսումնական հաստատությունում կազմակերպվում են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման միջոցառումներ՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի փոխանցման ուղիների և կանխարգելման մասին գիտելիքների մակարդակը բարձրացնելու նպատակով, | Ոչ | Առանձին միջոցառումներ չեն իրականացվում: Հաշվի առնելով սովորողների հատուկ կրթական կարիքները |
| Ուսումնական հաստատությունն ստեղծում է ուսումնամեթոդական նյութեր և կազմակերպում է միջոցառումներ՝ ուղղված բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեմ. | Այո | Ուսումնական հաստատությունում իրականացվում են բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման կանխարգելմանն ուղղված աշխատանքներ ծնողական և մանկավարժական համայնքի համար: Սովորողների համար հատուկ կրթական կարիքներից ելնելով՝ կիրառվում են պարզեցված, տեսողական և հասանելի ուսումնամեթոդական նյութեր, կազմակերպվում են իրավունքների իրազեկման բաց դասեր և միջոցառումներ (տես՝ աղյուսակ 4.2) |

**Աղյուսակ 4.1**

| Ուսումնական հասատության կողմից երեխայի խնամքի ու դաստիարակության, ընտանիքում ծնողական պարտականությունների նկատմամբ պատասխանատվության բարձրացման, ինչպես նաև բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման բացառման, երեխայի զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորման հարցերի վերաբերյալ ծնողների իրազեկմանն ուղղված միջոցառումներ և մեխանիզմներ | | | |
|---|---|---|---|
| **Միջոցառում** | **Ամսաթիվ** | **Վարող** | **Մասնակիցների թիվ** |
| Համադպրոցական ծնողական ժողով | 01.09.2025 | Տնօրենի պ/կ | 52 |
| Անվտանգ և ապահով կրթական միջավայր | 03.11.2025 | ԿԱԴԱՀ | 21 |
| Ծնողավարման հմտություններ | 27.04.2026 | Հոգեբան | 14 |
| Հանդիպում 9-րդ ավարտական դասարանների ծնողների հետ | 23.05.2025 | Տնօրենի ժ/պ | 4 |

**Աղյուսակ 4.2**

| **Ուսումնական հաստատության ստեղծած ուսումնամեթոդական նյութերը և կազմակերպած միջոցառումները՝ ուղղված բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեմ** | | | |
|---|---|---|---|
| **Դասընթացի անվանումը, միջոցառման թեման, օգտագործված ուսումնամեթոդական նյութերը** | **Ամսաթիվ** | **Վարող** | **Մասնակիցների թիվ** |
| Անվտանգ ապահով միջավայր խորագրով բաց դաս | 24.09.2025 | Դաստիարակներ | 30 |
| Իրավունքների իրազեկման շաբաթ, ամփոփվել է՝ Իմ իրավունքները խորագրով բաց դասով | 04.12.2025 | Դաստիարակներ | 45 |
| Անվտանգ, ապահով կրթական տարի՝ Առջևում ամառայի արձակուրդներ են խորագրով | 13.05.2026 | Դասվարներ | 57 |

## <u>Մաս 5. Ընդհանուր տեղեկություններ սովորողների առաջադիմության, մանկավարժական անձնակազմի և կրթական միջավայրի վերաբերյալ</u>

**5. Ուսումնական հաստատության սովորողների առաջխաղացում և առաջադիմություն.**

| **Գնահատման չափանիշ** | **Արդյունք** | **Նկարագիր, մեկնաբանություն** |
|---|---|---|
| Սովորողների միջին տարեկան գնահատականները՝ ըստ կրթական աստիճանների, | Տես՝ աղյուսակ 5 .1 | Համաձայն գործող կարգավորումների՝ հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում ինտելեկտուալ (մտավոր) 3-րդ և 4-րդ աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողների համար գնահատումն իրականացվում է ըստ ԱՈՒՊ-ի: 2025– |

| | | |
|---|---|---|
| | | 2026 ուսումնական տարում սովորողների առաջադիմության վերլուծությունը ցույց է տալիս, որ ԱՈՒՊ-ով ուսումնառող 130 սովորողների շրջանում բոլոր առարկաների տարեկան գնահատականների միջինացված տվյալներով՝ 1 միավոր ունի 8 սովորող, 2 միավոր՝ 47 սովորող, 3 միավոր՝ 54 սովորող, 4 միավոր՝ 21 սովորող, իսկ 5 միավոր գնահատական ունեցող սովորող չկա |
| Գերազանց առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների, | 0 | 2025–2026 ուսումնական տարվա առաջադիմության տվյալների վերլուծության համաձայն՝ տարրական և միջին կրթական աստիճաններում 5 միավոր՝ «շատ լավ» գնահատական ստացած սովորողներ չեն արձանագրվել |
| Ցածր առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների, | Տես՝ աղյուսակ 5 .1 | 2025–2026 ուսումնական տարվա տվյալների համաձայն՝ 1 միավոր՝ «շատ վատ» գնահատական ունեցող սովորողների ընդհանուր թիվը 8 է, որը կազմում է սովորողների ընդհանուր թվի 6.2%-ը: Տարրական կրթական աստիճանում 1 միավոր գնահատական ունեցող սովորողների թիվը 7 է՝ 10.1%, իսկ միջին կրթական աստիճանում՝ 1 սովորող՝ 1.6%: Տվյալները ցույց են տալիս, որ 1 միավոր գնահատական ունեցող սովորողների համամասնությունը տարրական կրթական աստիճանում զգալիորեն ավելի բարձր է, քան միջին կրթական աստիճանում |
| Ավարտման գործակիցը՝ ըստ կրթական աստիճանների, | Տես՝ աղյուսակ 5 .2 | 2025–2026 ուսումնական տարում տարրական կրթական աստիճանի ավարտական՝ 4-րդ դասարաններում սովորել է 17 սովորող, որոնցից 16-ը ավարտել են կրթական աստիճանը, իսկ 1 սովորող չի գնահատվել և մնացել է վերաքննության: Տարրական կրթական աստիճանի ավարտման գործակիցը կազմել է 94.1%: Միջին կրթական աստիճանի ավարտական՝ 9-րդ դասարանում սովորել է 9 սովորող, որոնցից բոլորն ավարտել են համապատասխան կրթական աստիճանը: Միջին կրթական աստիճանի ավարտման գործակիցը կազմել է 100% |
| Երկտարեցիների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների, | 0 | 2025-2026 ուսումնական տարում երկտարեցի սովորողներ չկան |
| Կրկնուսույցների մոտ պարապող սովորողների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների, | 0 | Առկա չէ |
| Միասնական քննություններին մասնակիցների թիվը և տոկոսը՝ շրջանավարտների ընդհանուր թվի նկատմամբ, | 0 | Գործող կարգի և ծնողների դիմումներ համաձայն 2025-2026 ուսումնական տարում ավարտական և միասնական քննություն հանձնող սովորողներ չեն եղել |
| Ավարտական ու միասնական քննություններից անբավարար ստացած շրջանավարտների թիվը և տոկոսը՝ շրջանավարտների ընդհանուր թվի նկատմամբ, | 0 | Առկա չէ |
| Հիմնական դպրոցն ավարտած սովորողներից նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական հաստատություններ ընդունվածների թիվը և տոկոսը, | 0 | Առկա չէ |
| Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական հաստատություններ ընդունված 12-րդ դասարանի շրջանավարտների թիվը և | 0 | Դպրոցը հիմնական է |

| | | |
|---|---|---|
| տոկոսը, | | |
| Հիմնական դպրոցն ավարտած այն սովորողների թիվը և տոկոսը, ովքեր ուսումը շարունակում են ավագ դպրոցներում կամ ավագ դասարաններում, | 6 | Նախնական տվյալների համաձայն հիմնական դպրոցն ավարտած 9-ը շրջանավարտներից կրթությունը շարունակելու վերաբերյալ օրինական ներկայացուցչի տրամադրած տեղեկատվության համաձայն 6 սովորող կրթությունը շարունակելու է ավագ դպրոցում |
| Բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունված շրջանավարտների թիվը և տոկոսը՝ շրջանավարտների ընդհանուր թվի համեմատ, | 0 | Առկա չէ |
| Սովորողների բացակայությունների ընդհանուր թիվը՝ ժամերով՝ ըստ կրթական աստիճանների, | 6394 | Տարրական դասարաններ՝ 3520<br>Հիմնական դասարաններ՝ 2874 |
| Դասարանից դասարան վաղաժամկետ փոխադրված սովորողների թիվը և տոկոսը, | 0 | Առկա չէ |
| Ուսումնական տարվա ըթացքում տվյալ հաստատությունից այլ հաստատություն տեղափոխված սովորողների թիվը և տոկոսը ըստ կրթական աստիճանների (տոկոսի հաշվարկ. տվյալ կրթական աստիճանում տվյալ հաստատությունից տեղափոխված սովորողների ընդհանուր թվի հարաբերությունը նույն կրթական աստիճանում սովորողների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ)<br>***այդ թվում .*** | 3 | 0 |
| ➢ ՀՀ այլ հաստատություններ տեղափոխվածների թիվը | 7 | Տարրական դասարաններ՝ 2<br>Հիմնական դասարաններ՝ 5 |
| ➢ այլ երկրների ուսումնական հաստատությունների տեղափոխվածների թիվը | 1 | Տարրական դասարաններ՝ 1<br>Հիմնական դասարաններ՝ 0 |
| ➢ ուսումնական տարվա ընթացքում ուսումն ընդհատած (անավարտ թողած) սովորողների ընդհանուր թիվը ըստ կրթական աստիճանների, այդ թվում | 0 | Առկա չէ |
| ➢ հիվանդության, անկարողության պատճառով /մահացել/ | 0 | Առկա չէ |
| ➢ ընտանիքի սոցիալական վիճակի պատճառով | 0 | Առկա չէ |
| ➢ սովորել չցանականալու պատճառով | 0 | Առկա չէ |
| ➢ այլ պատճառներով | 0 | Առկա չէ |
| Ուսումնական տարվա ընթացքում ուսումն ընդհատած (անավարտ թողած) սովորողների ընդհանուր թիվը, այդ թվում՝ հիվանդության, անկարողության, ընտանիքի սոցիալական վիճակի, սովորել չցանկնանալու և այլ պատճառներով, | 0 | Առկա չէ |
| Մարզային, հանրապետական, միջազգային առարկայական օլիմպիադաների ու մարզական, մշակույթի ոլորտում ստեղծագործական և կատարողական մրցույթների | 0 | Առկա չէ |

| | | |
|---|---|---|
| մասնակիցների թիվը և տոկոսը՝ հաստատության սովորողների ընդհանուր թվի համեմատ, | | |
| Մարզային, հանրապետական, միջազգային առարկայական օլիմպիադաներում ու մարզական, մշակույթի ոլորտում ստեղծագործական և կատարողական մրցույթներում մրցանակներ ստացած սովորողների թիվը և տոկոսը՝ մասնակիցների ընդհանուր թվի համեմատ. | 0 | Առկա չէ |

**Աղյուսակ 5.1**

| Սովորողների միջին տարեկան գնահատականները՝ ըստ կրթական աստիճանների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **Կրթական աստիճան** | **Դասարաններ** | **Սովորողների թիվ** | Միավորներ ըստ ԱՈՒՊ-ի | | | | |
| | | | 1 | 2 | 3 | 4 | 5 |
| Տարրական | 1-4-րդ | 69 | 7 | 25 | 26 | 10 | 0 |
| Միջին | 5-9-րդ | 61 | 1 | 21 | 28 | 11 | 0 |
| **Ընդամենը** | **1-9-րդ** | **130** | **8** | **46** | **54** | **21** | **0** |

Տարրական դասարանի (4-րդ) 1 սովորող բացակայությունների պատճառով չի գնահատվել:

**Աղյուսակ 5.2**

| **Հիմնական առարկաներ** | **Սովորողների թիվը** | | | **Հիմնական առարկաներից տարեկան գնահատականների միջինը** | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **4-րդ. դաս.** | **9-րդ. դաս.** | **12-րդ. դաս.** | **4-րդ. դաս.** | **9-րդ. դաս.** | **12-րդ. դաս.** |
| Մայրենի | 17 | 9 | - | Ե | 4.5 | - |
| Մաթեմատիկա | 17 | 9 | - | Ե | 4.5 | - |
| Հայրենագիտություն | 0 | 9 | - | 0 | 4.8 | - |
| Բնագիտություն | 0 | 9 | - | 0 | 4.6 | - |
| **Ընդամենը** | **17** | **9** | **-** | **Ե** | **4.6** | - |

Գնահատվել է 16 սովորող, 1-ը (4-րդ դասարան)՝ վերաքննություն:

**6. Ուսումնական հաստատության ուսուցչական անձնակազմ և գործունեություն.**

| **Ցուցանիշ** | **2025-2026 ուստարի** |
|---|---|
| Բարձրագույն մանկավարժական կրթություն ունեցող մանկավարժների թիվը և տոկոսը (տոկոսի հաշվարկ. բարձրագույն մանկավարժական որակավորում ունեցող հաստատությանուսուցիչների թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ) | 61 մանկավարժ 81% |
| Ըստ մասնագիտության դասավանդող ուսուցիչների թիվը և տոկոսը (տոկոսի հաշվարկ. ըստ մասնագիտության դասավանդող հաստատության ուսուցիչների թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ) | 24 ուսուցիչ 100% |
| Տարակարգ ունեցող ուսուցիչների թիվը և տոկոսը (տոկոսի հաշվարկ. տարակարգ ունեցող հաստատության ուսուցիչների թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ) | 1 |
| Գիտական կոչում ունեցող ուսուցիչների թիվը և տոկոսը (տոկոսի հաշվարկ. գիտական կոչում ունեցող հաստատության ուսուցիչների թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ) | 0 |
| Նախարարության կողմից երաշխավորված կամ այլ կազմակերպություններում վերջին 3 տարում վերապատրաստում անցած ուսուցիչների թիվը և տոկոսը (տոկոսի հաշվարկ. վերջին 3 տարում վերապատրաստում անցած հաստատության ուսուցիչների թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ) | 24 ուսուցիչ 100% |
| Որպես ուսուցիչ վերապատրաստող (դասախոս) վերապատրաստված և վերապատրաստման | 0 |

| | |
|---|---|
| դասընթացներ վարող ուսուցիչների թիվը և տոկոսը (տոկոսի հաշվարկ. վերապատրաստման դասընթաց վարող հաստատության ուսուցիչների թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ) | |
| Ուսուցիչների միջին տարիքը (հաշվարկ. հաստատության բոլոր ուսուցիչների տարիքների գումարի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին) | 41 |
| Միջազգային ու հանրապետական պարբերականներում (ամսագրերում) հոդվածներ, մասնագիտական հրապարակումներ, ինչպես նաև դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ, գիտամանկավարժական, հեղինակային և այլ աշխատություններ ունեցող ուսուցիչների թիվը և տոկոսը. (տոկոսի հաշվարկ. հոդվածներ և վերը նշված մասնագիտական հրապարակումներն ունեցող հաստատության ուսուցիչների թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ) | 0 |
| Դասավանդման աշակերտակենտրոն, մասնակցային, ինտերակտիվ մեթոդներին տիրապետող և դրանք կիրառող ուսուցիչների թիվը և տոկոսը (տոկոսի հաշվարկ. դասավանդման աշակերտակենտրոն, ինտերակտիվ մեթոդներին տիրապետող և կիրառող հաստատության ուսուցիչներիթվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ) | 24 ուսուցիչ 100% |
| Ուսումնական գործընթացում տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներ, այդ թվում՝ ինտերնետ, կիրառող ուսուցիչների թիվը և տոկոսը (տոկոսի հաշվարկ. ուսումնական գործընթացում տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներ, այդ թվում ինտերնետ կիրառող ուսուցիչների թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ) | 24 ուսուցիչ 100% |
| Սովորողներին համակարգիչների կիրառմամբ տնային աշխատանքներ հանձնարարող ուսուցիչների թիվը (հեռավար դասեր տեղադրող) | 18 ուսուցիչ (հեռավար դասեր տեղադրող) |
| Ուսուցիչների բացակայությունների ընդհանուր թիվը (հաշվարկ. ուստարվա ընթացքում հաստատության բոլոր ուսուցիչների բացակայած օրերի ընդհանուր թիվը) | 328 |
| Ուստարվա ընթացքում հաստատությունում անցկացվող ցուցադրական բաց դասերի թիվը | 35 |
| Ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալսումների թիվը | 152 |
| Ուսումնական տարվա ընթացքում հաստատությունից դուրս անցկացվող գործնական պարապմունքների/էքսկուրսիաների թիվը | 9 |
| Նախարարության և այլ կազմակերպությունների հետ համատեղ անցկացվող մրցույթներին մասնակցած ուսուցիչների թիվը և տոկոսը (տոկոսի հաշվարկ. մրցույթներին մասնակցածհաստատության ուսուցիչների թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ) | 0 |
| Տարբեր մրցույթների մասնակցած և մրցանակներ ստացած ուսուցիչների թիվը և տոկոսը (տոկոսի հաշվարկ. մրցանակներ ստացած հաստատության ուսուցիչների թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ) | 1 |

**Աղյուսակ 6.1 Ընդհանուր տվյալներ մանկավարժների վերաբերյալ՝ նախորդ 3 ուստարիների համար**

| Ցուցանիշը | 2023-2024 ուստարի | 2024-2025 ուստարի | 2025-2026 ուստարի | Փոփոխություն ների դինամիկան (աճ կամ նվազում) |
|---|---|---|---|---|
| Ուսուցիչների ընդհանուր թիվը | 42 (տարեսկզբ) 46 (տարեվերջ) | 22 (տարեսկզբ) 21 (տարեվերջ) | 25 (տարեսկզբ) 25 (տարեվերջ) | չկա |
| ԲՄԹ անդամներ | | 8 (տարեսկզբ) 7 (տարեվերջ) | 7 (տարեսկզբ) 7 (տարեվերջ) | նվազում |
| Դաստիարակներ | | 19 (տարեսկզբ) 21 (տարեվերջ) | 27 (տարեսկզբ) 29 (տարեվերջ) | աճ |
| Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը | 21.3 | 22.4 | 22.9 | աճ |

**Աղյուսակ 6.2 Տվյալներ ուսուցիչների տարիքային բաշխվածության վերաբերյալ՝ նախորդ 3 ուստարիների համար**

| **Մանկավարժների թիվը (ուսուցիչ և դաստիարակ)** | **2023-2024 ուստարի** | **2024-2025 ուստարի** | **2025-2026 ուստարի** | **Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)** |
|---|---|---|---|---|
| Մինչև 34 տարեկան | 14 | 12 | 9 և 8 (17) | աճ |
| 35-ից 44 տարեկան | 11 | 16 | 7 և 14 (21) | աճ |
| 45-ից -54 տարեկան | 13 | 14 | 8 և 8 (16) | աճ |
| 55-ից -64 տարեկան | 6 | 5 | 2 և 4 (6) | աճ |
| 65 տարեկան և ավելի | 2 | 2 | 1 | նվազում |

Մանկավարժական անձնակազմում այս տարի նկատվել է երիտասարդ մասնագետների աճ, ինչը պայմանավորված է նոր աշխատակիցների ներգրավմամբ և ինչն էլ նպաստել է, որ ուսուցիչների տարիքային կազմում անցած տարի նկատված միջինից բարձր տարիքային շեմը իջնի:

## 7. Ուսումնական հաստատությունում ստեղծված կրթական միջավայր

| **Գնահատման չափանիշ** | **Արդյունք** | **Նկարագիր, մեկնաբանություն** |
|---|---|---|
| Ուսումնական հաստատությունն ունի գործող գրադարան, որը հագեցած է ուսումնաօժանդակ գրականությամբ, գույքով և սարքավորումներով: Գրադարանից կանոնավոր կերպով օգտվում են սովորողները, ուսուցիչները և վարչական կազմը, | Այո | Ուսումնական հաստատությունն ունի գործող գրադարան, հատկացված է ընդարձակ սենյակ, համալրված է ուսումնաօժանդակ գրականությամբ, համապատասխան գույքով և անհրաժեշտ սարքավորումներով: Գրադարանում տեղակայված է նաև դպրոցի խաղադարանը: Գրադարանը կան նաև համակարգիչներ: Գրադարանից օգտվում են ուսուցիչները և վարչական կազմը: Սովորողների առանձնահատկություններով պայմանավորված՝ գրադարանից օգտվելու գործընթացը կազմակերպվում է մանկավարժական և աջակցող անձնակազմի ուղեկցությամբ և աջակցությամբ: Գրադարանային ֆոնդը և առկա նյութերը կիրառվում են ուսումնական գործընթացի կազմակերպման և սովորողների ճանաչողական ու հաղորդակցական կարողությունների զարգացման նպատակով (տես աղյուսակ՝ 7.1) |
| Ուսումնական հաստատությունն ունի ուսումնական լաբորատորիաներ ու կաբինետներ, այդ թվում՝ քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության, աշխարհագրության, ռազմագիտության, համակարգչային և այլն, ինչպես նաև արհեստանոցներ, մարզադահլիճ, միջոցառումների անցկացման դահլիճ և այլ հատուկ ուսումնական դասասենյակներ (սենյակներ), այդ թվում՝ արտադպրոցական կրթության և լրացուցիչ կրթական ծրագրերի համար (լուսանկարչական խմբակ, նկարչական խմբակ, երաժշտական խմբակ և | Մասամբ՝ պայմանավորված դպրոցի առանձնահատուկներով | Ուսումնական հաստատությունն ունի ուսումնական գործընթացի կազմակերպման համար նախատեսված համապատասխան կաբինետներ և դասասենյակներ, որոնք համալրված են անհրաժեշտ գույքով, ուսումնական պարագաներով, ուսումնադիդակտիկ և այլ նյութերով: Հաստատությունում առկա են կենցաղավարման հմտությունների զարգացման՝ տեխնոլոգիայի, երաժշտության և արվեստի ուղղվածությամբ սենյակներ, ինչպես նաև այլ մասնագիտացված |

| | | |
|---|---|---|
| այլն), որոնք հագեցած են անհրաժեշտ գույքով, ուսումնական պարագաներով, ուսումնանյութական և ուսումնադիդակտիկ նյութերով. | | ուսումնական կաբինետներ: Հաստատությունում առկա է մեծ մարզադահլիճ, սակայն դրա տարածքային հեռավորության պատճառով այն հաճախ չի օգտագործվում: Միաժամանակ յուրաքանչյուր մասնաշենքում առկա են կահավորված և ուսումնական գործընթացի համար հարմարեցված մեծ սպորտային դասասենյակներ, որտեղ կազմակերպվում են «Ֆիզկուլտուրա» առարկայի դասերը և շարժողական ակտիվությանը նպաստող այլ աշխատանքներ: Ուսումնական և հատուկ դասասենյակներն օգտագործվում են նաև սովորողների անհատական և խմբային աշխատանքների, ստեղծագործական գործունեության, լրացուցիչ կրթական ծրագրերի և արտադասարանական միջոցառումների կազմակերպման նպատակով: Առկա նյութերը և միջավայրը հնարավորության սահմաններում հարմարեցվում են սովորողների կրթական առանձնահատուկ կարիքներին (տես աղյուսակ՝ 7.2) |

**Աղյուսակ 7.1 Տվյալներ հաստատության գրադարանի և դրա գործունեության մասին**

| Ցուցանիշ | Տվյալներ |
|---|---|
| Գրադարանի տարածքը ք.մ-ով | 62.7 ք. մ |
| Գրադարանում համակարգիչների թիվը | 4 մոնիտոր |
| Գրադարանում ինտերնետին միացված համակարգչների թիվը | 0 |
| Գրադարարանում կամ ընթերցասրահում նստատեղերի թիվը | 4 |
| Գրադարանային ֆոնդում առկա գրքերի (բացառությամբ ՀՀ ԿԳ նախարարության կողմից երաշխավորված հիմնական դասագրքերի) ընդհանուր թիվը, ***այդ թվում.*** | 360 |
| ➢ գեղարվեստական գրքերի թիվը | 310 |
| ➢ տեղեկատվական գրքերի թիվը (բառարաններ, հանրագիտարաններ, ատլասներ և այլն) | 10 |
| ➢ ուսումնամեթոդական գրքերի թիվը | 40 |
| ➢ ամսագրերի թիվը | 0 |
| ➢ այլ | 0 |
| Վերջին անգամ գրադարանային ֆոնդի նոր գրականությամբ համալրվելու տարեթիվը | 2025 -2026 սեպտեմբեր մարտ |
| Գրադարանից միջինում ամսական օգտվողների թիվը | 24 |
| **Նկարագիր, մեկնաբանություն (պատասխանել այո կամ ոչ)** | |
| Վերանորոգվա՞ծ է արդյոք գրադարանը | այո |
| Անցկացվո՞ւմ են գրադարանում դասեր և ուսումնական պարապմունքներ | ոչ |
| Գրադարանավարն ունի՞ համապատասխան բարձրագույն կրթություն | այո |
| Վերջին 3 տարվա ընթացքում գրադարանվարն անցե՞լ է վերապատրաստում գրադարանային աշխատանքի ուղղությամբ | այո |
| Գրադարանը հանդիսանու՞մ է հանրապետության, այլ երկրների կամ կազմակերպությունների գրադարանների բաժանորդ և օգտվում է արդյոք նրանց ռեսուրսներից | ոչ |
| Գրադարանն ունի՞ էլեկտրոնային ռեսուրսներ, որքան | ոչ |

| | |
|---|---|
| Սովորողները կարո՞ղ են ինքնուրույն ու ազատ մոտենալ գրադարանի գրադարակներին և պահարաններին, ընտրել իրենց անհրաժեշտ գրականությունը և վերցնել այն ընթերցասրահում աշխատելու ժամանակ | այո |
| Գրադարանն ունի՞ գրադարանավարության հատուկ համակարգչային ծրագիր | այո |
| Գրադանավարը կարողանո՞ւմ է օգտվել գրադարանավարության հատուկ համակարգչային ծրագրից | այո |

**Աղյուսակ 7.2 Տվյալներ հաստատության աշխատասենյակների և դահլիճների վերաբերյալ**

| Մասնագիտական կաբինետներ և դահլիճներ | Տարածքը (ք.մ) | Վերանորոգման կարիքը | Առկա գույքը, (թվարկել հիմնականը և նշել քանակները) | Ուսումնա-նյութական, ուսումնա-դիդակտիկ նյութերը | Լրացուցիչ, գույքի, սարքա վորումների, պարագաների նյութերի կարիքը |
|---|---|---|---|---|---|
| Լոգոպեդի աշխատասենյակ | 36 | Վերանորոգված է | Աշխատանքի համար անհրաժեշտ նվազագույն գույքն առկա է | Առկա են բավարար քանակությամբ | կա |
| Հոգեբանի աշխատասենյակ | 36 | Վերանորոգված է | Աշխատանքի համար անհրաժեշտ նվազագույն գույքն առկա է | Խաղեր, դիդակտիկ նյութեր | կա |
| Հատուկ մանկավարժի աշխատասենյակ | 20 | Վերանորոգված է | Աշխատանքի համար անհրաժեշտ նվազագույն գույքն առկա է | Առկա են բավարար քանակությամբ | կա |
| Միջոցառումների դահլիճ | 231.5 | Վերանորոգված է | Աշխատանքի համար անհրաժեշտ նվազագույն գույքն առկա է | 145 աթոռ, բեմ | կա |
| Էրգոթերապիայի սենյակ | 36 | Վերանորոգված է | Հագեցած է անհրաժեշտ պարագաներով | Առկա են բավարար քանակությամբ | կա |
| Էրգոթերապիայի սենյակ | 36 | Վերանորոգված է | Հագեցած է անհրաժեշտ պարագաներով (Բոբաթ սեղան աթոռ հայելի, զգայական մերսումների պարագաներ, ձեռքի հարմարեցումներ) | Առկա են բավարար քանակությամբ | կա |
| Լուսային սենյակ | 20 | Վերանորոգված է | Հագեցած է անհրաժեշտ պարագաներով (ճոճ, պարկաթոռ, հայելի, տարատեսակ լույսեր) | Առկա են բավարար քանակությամբ | կա |
| Սոցկենցաղային հմտությունների ձևավորման սենյակ | 36 | Վերանորոգված է | Հագեցած է անհրաժեշտ պարագաներով (սառնարան, գազօջախ, խոհանոցին անհրաժեշտ սարք, պահարան, սեղաններ, աթոռներ) | Առկա են բավարար քանակությամբ | կա |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Արտթերապիայի և ավազաթերապիայի սենյակ | 36 | Վերանորոգված է | Աշխատանքի համար անհրաժեշտ նվազագույն գույքն առկա է (մոլբերտներ, պահարան, սեղան, աթոռ) | Առկա են բավարար քանակությամբ | կա |
| Երաժշտաթերապիայի սենյակ | 36 | Վերանորոգված է | Աշխատանքի համար անհրաժեշտ նվազագույն գույքն առկա է (երաժշտական գործիքներ, դաշնամուր, երաժշտական կենտրոն պահարան, սեղան, աթոռ) | Առկա են բավարար քանակությամբ | կա |
| Հեքիաթաթերապիայի սենյակ | 20 | Վերանորոգված է | Հագեցած է անհրաժեշտ պարագաներով (հեքաթների պաստառներ, տիկնիկներ, պահարան, սեղան, աթոռ, բազմոց) | Առկա են բավարար քանակությամբ | կա |
| Սպորտ դահլիճ | 264 | Վերանորոգված է | Աշխատանքի համար անհրաժեշտ նվազագույն գույքն առկա է Մարզապատ, մմ. նստարաններ, մատեր, | Գնդակներ, օղակներ, մարզափայտեր, գլաններ, աշտարակ խաչընդոտներ: | կա |
| Ֆիզկուլտուրայի սենյակ | 62.7 | Վերանորոգված է | Աշխատանքի համար անհրաժեշտ նվազագույն գույքն առկա է՝ նստարան, մատ: | Գնդակներ, օղակներ, մմ. պարան, մարզափայտեր, գլաններ և այլն | կա |
| Ֆիզկուլտուրայի սենյակ (օգնիր սենյակ) | 62.7 | Վերանորոգված է | Աշխատանքի համար անհրաժեշտ գույքն առկա է (Տարատեսակ ճոճեր, գնդակներով չոր լողավազան, մագլցման պատ, բատուտ) | Առկա են բավարար քանակությամբ | կա |
| Վարչատնտեսական համակարգողի աշխատասենյակ | 60 | Վերանորոգված է | 12 հատ աթոռ, սեղաններ, բազմոց, բազկաթոռ | Առկա է | կա |
| Այլ՝ հանդերձարան | 60 | Վերանորոգված է | Աշխատանքի համար անհրաժեշտ նվազագույն գույքն առկա է | Կախիչների ստենդ թվով 5 | կա |

Հաստատությունը վերանորոգված է, աշխատանքի համար անհրաժեշտ նվազագույն գույքը առկա է:

**8. Ուսումնական հաստատության մարդկային, ֆինանսական և նյութական ռեսուրսների տնօրինում.**

| Ցուցանիշներ | 2025-2026 ուստարի | Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում) |
|---|---|---|

| | | |
|---|---|---|
| Սովորող-մանկավարժ հարաբերությունը (հաշվարկ. հաստատության սովորողների ընդհանուր թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին) | 130/61<br>2.1 | աճ |
| Սովորող-սպասարկող անձնակազմ հարաբերությունը (հաշվարկ.հաստատության սովորողների ընդհանուր թվի հարաբերությունը սպասարկող անձնակազմի ընդհանուր թվին) | 130/33<br>3.39 | աճ |
| Դասարանների միջին խտությունը (հաշվարկ.հաստատության սովորողների ընդհանուր թվի հարաբերությունը կոմպլեկտավորված դասարանների ընդհանուր թվին) | 7 | նվազում |
| Մեկ սովորողի հաշվով հաստատության տարեկան նախահաշիվը (հաշվարկ.հաստատության տարեկան բյուջեով հաստատված ամբողջ գումարի հարաբերությունը հաստատության սովորողների ընդհանուր թվին) | 245338 | աճ |
| Ուսուցչների միջին աշխատավարձը | 154882 | աճ |
| Վարչատնտեսական աշխատողների միջին աշախատավարձը | 266866 | աճ |
| Սպասարկող կազմի միջին աշխատավարձը, | 104000 | աճ |
| Հաստատության տարեկան նախահաշվում արտաբյուջետային միջոցների չափը, | 4.300.000<br>1.74 % | աճ |
| Ծնողների կողմից դրամական ներդրումների տարեկան չափը, | 0 | |
| Հովանավորչական և դրամաշնորհային միջոցների տարեկան չափը, | 0 | |
| Աշխատավարձերի վճարման գծով հաստատության տարեկան ծախսերի չափը, | 204.270.000<br>82.5 % | աճ |
| Կոմունալ վճարների գծով հաստատության տարեկան ծախսերի չափը, | 15.923.001<br>6.6 % | աճ |
| Նոր գույքի, այդ թվում՝ սարքավորումների ձեռքբերման գծով հաստատության տարեկան ծախսերի չափը. | 0 | |

**9. Ուսումնական հաստատությունում սովորողների և տնօրինության համագործակցությունը, սովորողների մասնակցությունը հաստատության գործունեությանը.**

| Գնահատման չափանիշ | Արդյունք | Նկարագիր, մեկնաբանություն |
|---|---|---|
| Տնօրինությունը խթանում է սովորողների նախաձեռնությունները, օժանդակում դրանց իրագործմանը, | Ոչ | Սովորողների կրթության առանձնահատուկ պայմանների, մասնավորապես՝ ինտելեկտուալ 3-րդ և 4-րդ աստիճանի աջակցության կարիքներով պայմանավորված՝ նշված գործողությունները սովորողների կողմից չեն իրականացվում |
| Սովորողների մասնակցությունն իրենց վերաբերող խնդրահարույց հարցերի վերաբերյալ տնօրինության կողմից որոշումների ընդունմանը, նման դեպքերի թիվը և մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը, | | |
| Սովորողների կողմից առաջարկված նոր նախաձեռնությունները և դրանց թիվը, նախաձեռնություններին մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը, | | |
| Սովորողների կողմից կազմակերպված միջոցառումները և դրանց թիվը, միջոցառումներին մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը, | | |
| Սովորողների մասնակցությունը հաստատության ներքին կարգապահական կանոնների մշակմանը, մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը, | | |
| Իրենց հուզող հարցերի վերաբերյալ սովորողների կողմից կազմակերպված համաժողովները, սեմինարները, կլոր սեղանները, քննարկումները, դրանց թիվը և մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը, | | |

**10. Ոուսումնական հաստատությունում ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան աշակերտական խորհուրդի գործունեությունը.**

| Գնահատման չափանիշ | Արդյունք | Նկարագիր, մեկնաբանություն |
|---|---|---|
| Աշակերտական խորհրդի նախաձեռնած քայլերը՝ ուղղված ուսման մեջ կամ այլ հարցերում խնդիրներ ունեցող սովորողներին աջակցելուն, | Ոչ | Սովորողների կրթության առանձնահատուկ պայմանների, մասնավորապես՝ ինտելեկտուալ 3-րդ և 4-րդ աստիճանի աջակցության կարիքներով պայմանավորված՝ նշված գործողությունները սովորողների կողմից չեն իրականացվում |
| Աշակերտական խորհրդի ձեռնարկած միջոցները՝ սովորողների միջև ծագած վեճերին և խնդիրներին լուծում տալու նպատակով, | | |
| Աշակերտական խորհրդի նախաձեռնած միջոցառումները՝ ներառյալ կազմակերպված շաբաթօրյակները, հաստատության և դպրոցամերձ տարածքի մաքրման աշխատանքները, դրանց հաճախականությունը և մասնակից սովորողների տոկոսը, | | |
| Աշակերտական խորհրդի գործունեության համապատասխանությունը ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին. | | |

**<u>Մաս 6. Ընդհանուր տեղեկություններ ծնողների և համայնքի գործունեության վերաբերյալ</u>**

**11. Ուսումնական հաստատության ծնողական խորհուրդը սերտ համագործակցում է տնօրինության և աշակերտական խորհրդի հետ, նպաստում սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքներին.**

| Ցուցանիշ | 2025-2026 ուստարի |
|---|---|
| Սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ ծնողական խորհրդի կողմից տնօրինությանը ներկայացված առաջարկների թիվը և ընդունված առաջարկների տոկոսը ներկայացվածի նկատամամբ. | 7<br>50% |
| Ծնողական խորհրդի կողմից տվյալ ուստարում կազմակերպված միջոցառումների՝ հանդեսների, հավաքների, երեկույթների, էքսկուրսիաների, ճանաչողական այցերի, ժողովների և այլնի թիվը | 1 |
| Ծնողական խորհրդի կողմից ուսուցիչներին խրախուսելու, նրանց նկատմամբ կարգապահական կամ այլ տույժեր կիրառելու և նմանատիպ առաջարկների թիվը | 0 |
| Ծնողական խորհրդի հանդիպումների հաճախականությունը՝ դրանց թիվը 1 ուստարվա ընթացքում | 4 |
| Ծնողական խորհրդի կողմից հաստատության ծնողազուրկ և սոցիալապես անապահով ընտանիքներից աջակցություն ստացող սովորողների տոկոսը տվյալ ուստարում | 0 |
| Ուսումնական հաստատության առօրյայից և տեղի ունեցող իրադարձություններից ծնողների տեղեկացվածության աստիճանը, | |
| Սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում ներառված ծնողների տոկոսը. | 70 % |

**Աղյուսակ 11.1 Սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ ծնողական խորհրդի կողմից տնօրինությանը ներկայացրած առաջարկությունները**

| Առաջարկություններ | Ամսաթիվ | Մասնակից ծնողների թիվը |
|---|---|---|
| ➢ Կազմակերպել դասալսումներ | Ուստարվա ընթացքում | 1 |
| ➢ Անցկացնել սեմինարներ ծնողների հոգեբանական խնդիրների լուծման, հաղթահարման համար | Ուստարվա ընթացքում | 21 |
| ➢ Ձեռք բերել նոր ավելի մեծ և հարմարեցված տրանսպորտային միջոց | 01.09.2025 | 14 |
| ➢ Վերանորոգել լողավազանը | 01.09.2025 | 50 |
| ➢ Երկու մասնաշենքում էլ փորձել ունենալ տարրողունակ, անխափան աշխատող վերելակ և թեքահարթակ | 28.04.2026 | 50 |
| ➢ Ավելացնել մասնագիտական աջակցության ծառայություններ տրամադրող մասնագետներին | 28.04.2026 | 100 |

| | | |
|---|---|---|
| ➢ Բարեկարգել բակային հատվածը | 28.04.2026 | 100 |

**Աղյուսակ 11.2 Ծնողական խորհրդի կողմից տվյալ ուստարում կազմակերպված միջոցառումների՝ հանդեսների, հավաքների, երեկույթների, էքսկուրսիաների, ճանաչողական այցերի, ժողովների և այլնի թիվը**

| Միջոցառումներ՝ հանդեսներ, հավաքներ, երեկույթներ, էքսկուրսիաներ, ճանաչողական այցեր, ժողովներ և այլն | Ամսաթիվ | Մասնակից ծնողների |
|---|---|---|
| ➢ Կանանց միջազգային օրվան նվիրված հյուրասիրություն | 06.03.2025 | 18 |

Նախորդ ուստարվա համեմատ ծնողական խորհրդի անդամներն ավելի շատ հարցեր են բարձրաձայնել և նկատվում է որոշակի ակտիվություն:

**12. Ուսումնական հաստատությունն ու համայնքը համագործակցում են, և ուսումնական հաստատությունը վարում է ակտիվ հասարակական կյանք.**

| Գնահատման չափանիշ | Նկարագիր, մեկնաբանություն |
|---|---|
| Ուսումնական հաստատության շենքային պայմանների բարելավման, տարածքի բարեկարգման, ուսումնանյութական բազայի համալրման և այլ աշխատանքներին համայնքի մասնակցությունը, այդ գործում կատարված ներդրումները, | Դպրոցի աշխատակազմի և ծնողական համայնքի խնդրանքին ընդառաջելով՝ ամռանը, համայնքը նախաձեռնել է դպրոցի հարակից տարածքի մաքրման աշխատանքներ, ինչպես նաև սկսել են կառուցել մայթեզրեր փողոցի երկու կողմում՝ տեղաշարժման դժվարություններ ունեցողների տեղաշարժն անխոչընդոտ ապահովելու նպատակով: |
| Համայնքային հիմնախնդիրների վերաբերյալ սովորողների տեղեկացվածությունը և նրանց մասնակցությունը համայնքի աշխատանքներին, մասնակցության ձևերը, մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը, | Սովորողների կրթության առանձնահատուկ պայմանների, մասնավորապես՝ ինտելեկտուալ 3-րդ և 4-րդ աստիճանի աջակցության կարիքներով պայմանավորված՝ նշված գործողություններում սովորողները ներգրավվածություն չեն ունեցել սակայն մանկավարժական և ուսումնաօժանդակ անձնակազմը ներգրավված է եղել կազմակերպված համայնքային շաբաթօրյակում (տես աղյուսակ 12.1) |
| Ուսումնական հաստատության կողմից համայնքի բնակիչների համար կազմակերպված ու անցկացված միջոցառումները և դրանց թիվը, մասնակից սովորողների տոկոսը և համայնքի ներկայացուցիչների թիվը, | Ուսումնական հաստատության կողմից համայնքի բնակիչների համար միջոցառումներ չեն կազմակերպվել, սակայն դպրոցի տարածքում գործում է կարատեի խմբակ՝ համայնքի բնակիչների համար (տես աղյուսակ 12.2) |
| Ուսումնական հաստատության կողմից հասարակական և այլ կազմակերպությունների հետ համատեղ իրականացված կրթական ծրագրերը, վերապատրաստումները, դրանց թիվը և մասնակից սովորողների թիվը՝ ըստ ծրագրերի. | Համագործակցություն մի շարք կազմակերպությունների հետ (տես աղյուսակ 12.3) |

**Աղյուսակ 12.1**

| Ուսումնական հաստատության մասնակցությունը համայնքի աշխատանքներին, մասնակցության ձևերը | | | |
|---|---|---|---|
| **Մասնակցության դեպքերը և դրանց ձևերը** | **Ամսաթիվ** | **Մասնակից սովորողների և աշխատողների թիվը** | **Մեկնաբանություն** |
| Համապետական շաբաթօրյակ | 03.05.2026 | 60 մանկավարժ<br>30 ուսումնաօժանդակ անձնակազմ | Դպրոցի և հարակից տարածքի մաքրում |
| Չորացած ճյուղերի հատում | 30.05. 2026 | ուսումնաօժանդակ անձնակազմ | Դպրոցի տարածքի բարեկարգում, ծառերի չորացած ճյուղերի հատում, դասասենյակներում բնական լուսավորության ապահովում |

**Աղյուսակ 12.2**

| Համայնքի բնակիչները օգտվում են հաստատության մարզադահլիճից, ինտերնետից, գրադարանից և այլ հնարավորություններից | | | |
|---|---|---|---|
| **Ինչ տարածքներից են օգտվում համայնքի բնակիչները** | **Օգտվելու հաճախականությունը** | **Օգտվող բնակիչների թիվը** | **Մեկնաբանություն** |
| Մարզադահլիճ | շաբաթական 2 անգամ | 60 | Արցախի կիոկուշի կարատեյի խմբակ |

**Աղյուսակ 12.3**

| Ուսումնական հաստատության կողմից պետական և հասարակական կազմակերպությունների հետ համատեղ իրականացված կրթական ծրագրերը, վերապատրաստումները դրանց թիվը և մասնակիցների թիվը՝ ըստ ծրագրերի | | | |
|---|---|---|---|
| **Նկարագրել հաստատության և այլ կազմակերպությունների համատեղ իրականացված բոլոր ծրագրերը** | **Ծրագրի տևողություն** | **Կազմակերպության անվանումը** | **Մասնակիցների թիվը** |
| ➢ Գույքադարան | Անժամկետ | Վորդ Վիժն, Լուսէ, Արբես, Իմ ուղի, ՍՈՐՍ | 5 կազմակերպության շահառուներ |
| ➢ Մասնագիտական վերապատրաստումներ | Անժամկետ | ՏՄԱԿ | 40 մանկավարժ |
| ➢ Մշակութային խմբակներ՝ 3 | Անժամկետ | «Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ | Երգի խմբակ՝ 6<br>Խեցեգործության խմբակ՝ 10<br>Նկարչության խմբակ՝ 23 |
| ➢ Մանկավարժական, առարկայական վերապատրաստումներ | Անժամկետ | ԿԶՆԱԿ | 24 |
| ➢ Սովորողների լրացուցիչ կրթական աջակցության ծառայությունների տրամադրում | Անժամկետ | ՍՈՐՍ հիմնադրամ | 60 |

Նախորդ ուստարվա համեմատ այս տարի չեն իրականացվել բասկետբոլի մարզումներ, իսկ ՍՈՐՍ հիմնադրամի կողմից աջակցություն ստացող սովորողներն ավելացել են՝ պայմանավորված դպրոցում սովորողների թվի ավելացմամբ:

## Մաս 7. Ընդհանուր տեղեկություններ ներառականության վերաբերյալ

**13. Ուսումնական հաստատությունում ներառական կրթության և հավասարության ապահովում.**

| Գնահատման չափանիշ | Արդյունք | Նկարագիր, մեկնաբանություն |
|---|---|---|
| Ներառական կրթության զարգացումը որպես նպատակ ամրագրված է հաստատության զարգացման ծրագրում, | Այո | Հաստատությանն իրականացնում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթության կազմակերպման, նրանց անհատական կարիքների հաշվառման, կրթական միջավայրի մատչելիության և անհրաժեշտ աջակցության ապահովման ուղղությամբ աշխատաքներ |

| | | |
|---|---|---|
| Ուսումնական հաստատության զարգացման ծրագրում պլանավորված են ներառական կրթության ապահովման համապատասխան միջոցառումներ, այդ թվում՝ ուսուցիչների վերապատրաստումներ, | Այո | Հաստատությանում նախատեսված են սովորողների կրթական առանձնահատուկ կարիքներին համապատասխան ուսուցման կազմակերպման, մանկավարժական և մասնագիտական աջակցության, ինչպես նաև ուսուցիչների մասնագիտական զարգացմանն ուղղված աշխատանքներ:<br>2025-2026 ուսումնական տաարում․<br>➢ վերապատրաստվել են 62 մանկավարժ,<br>➢ վերապատրաստում իրականացրել են 3 մանկավարժ |
| Ուսումնական հաստատության տնօրենն ունի ներառական կրթության գործընթացի համակարգման լիազորություններով օժտված տեղակալ (կամ այն պատվիրակված է տեղակալներից որևէ մեկին) | Այո | Ներառական կրթության և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթության կազմակերպման գործընթացը համակարգվում է տնօրենի ժ/պ-ի կողմից՝ համապատասխան լիազորությունների շրջանակում դրանք պատվիրակելով տնօրենի տեղակալներին |
| Ուսումնական հաստատության վեբ կայքում գործում է ներառական կրթության բաժին՝ ընտանիքի և համայնքի հետ հետադարձ կապի հնարավորությամբ | Այո | Ուսումնական հաստատությունն ունի նոր վեբ կայք, որում առկա է հետադարձ կապ բաժին՝ դպրոցին առնչվող ցանկացած հարցի վերաբերյալ հարցեր ուղղելու համար: |
| Ուսումնական հաստատությունն իրականացնում է երեխաների հավասար իրավունքներին, հանդուրժողականությանը նվիրված և նման այլ ուսումնական ծրագրեր | Այո | Հաստատությունում սովորողների առանձնահատկություններին և ընկալման հնարավորություններին համապատասխան իրականացվում են հավասար իրավունքների, փոխադարձ հարգանքի, հանդուրժողականության, անվտանգ վարքագծի, համագործակցության և միմյանց ընդունելու վերաբերյալ կրթական և դաստիարակչական աշխատանքներ: |

**14․ Ուսումնական հաստատության աշխատակազմն արդիականացնում է իր գիտելիքներն ու հմտությունները ներառական կրթության ոլորտում.**

| Գնահատման չափանիշ | Արդյունք | Նկարագիր, մեկնաբանություն |
|---|---|---|
| Վերջին հինգ տարում տնօրինությունը մասնակցել է ներառական հաստատությունների կառավարման թեմայով վերապատրաստումների, | Այո | Տնօրինությունը պարբերաբար մասնակցում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթության կազմակերպման, ներառական կրթության, երեխայի իրավունքների պաշտպանության և հաստատության կառավարման վերաբերյալ վերապատրաստումների և մասնագիտական զարգացման միջոցառումների: |
| Ուսումնական հաստատությունն ունի ներառական կրթության թեմաներով վերապատրաստված և վերապատրաստվող ուսուցիչներ, վերջին հինգ տարում ներառական կրթության թեմաներով վերապատրաստում անցած ուսուցիչների թիվը. | Այո | Հաստատությունում աշխատում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների հետ աշխատանքի վերաբերյալ վերապատրաստում անցած և շարունակաբար մասնագիտական զարգացում իրականացնող ուսուցիչներ |

**15․ Ուսումնական հաստատությունն ունի ռեսուրսներ՝ աջակցելու ԿԱՊԿ ունեցող երեխաների սովորելուն, և ուսումնական միջավայրը հարմարեցված է նրանց կարիքներին.**

| Գնահատման չափանիշ | Արդյունք | Նկարագիր, մեկնաբանություն |
|---|---|---|
| Ուսումնական հաստատությունում ամենուրեք (դասասենյակներ, դահլիճներ, գրադարաններ | Այո | Ուսումնական հաստատությունում ֆիզիկական մատչելիությունը հիմնականում ապահովված է, |

| | | |
|---|---|---|
| և այլն) տեղաշարժման տարբեր խնդիրներ ունեցող անձանց համար ապահովված է ֆիզիկական մատչելիություն, | | սակայն հաստատության բոլոր տարածքները լիարժեք հարմարեցված չեն տեղաշարժման տարբեր խնդիրներ ունեցող անձանց համար: Հաստատության առանձին մասնաշենքերում և ուսումնական տարածքներում ապահովված են տեղաշարժման համար անհրաժեշտ պայմաններ, սակայն առկա են տարածքային և ենթակառուցվածքային սահմանափակումներ, որոնք պահանջում են լրացուցիչ հարմարեցումներ՝ ֆիզիկական միջավայրի լիարժեք մատչելիությունն ապահովելու նպատակով |
| Ուսումնական հաստատությունն ունի ԿԱՊԿ ունեցող սովորողների հոգեբանամանկավարժական աջակցության թիմ (հատուկ մանկավարժ, սոցիալական աշխատող, հոգեբան, ուսուցչի օգնական և այլն), | Այո | Ուսումնական հաստատությունն ունի 7 անդամից բաղկացած հոգեբանամանկավարժական աջակցության թիմ.<br>Հոգեբան՝ 2<br>Հատուկ մանկավարժ՝ 2<br>Էրգոթերապիստ՝ 2<br>Լոգոպեդ՝ 1 և ևս 1-ը դասավանդում է այլընտրանքային հաղորդակցում գոյացած մանկավարժական ժամերի հաշվին աճխատաում է որպես առարկայական ուսուցիչ<br>Սոցիալական աշխատողի 1 հաստիք, որը ժամանակավորապես թափուր է (գտնվում է ֆիզարձակուրդում) |
| ԿԱՊԿ ունեցող սովորողներն ապահովված են դասագրքերով, գրենական պիտույքներով, հարմարանքներով, այլ պարագաներով, | Մասամբ | Սովորողների ապահովվածությունը դասագրքերով, գրենական պիտույքներով, հարմարանքներով և այլ ուսումնական պարագաներով իրականացվում է նրանց կրթական կարիքներին և կարողություններին համապատասխան: Սովորողների առանձնահատկություններով պայմանավորված՝ դասագրքեր չեն տրամադրվում, բացառություն են կազմում 1-ին դասարանի սովորողները: Միաժամանակ դպրոցը ներկայացված հայտերի հիման վրա ստանում է որոշ առարկաների դասագրքեր, որոնք օգտագործվում են մանկավարժական աշխատանքների կազմակերպման և ուսումնական գործընթացի ապահովման նպատակով: Ուսումնական գործընթացում դասագրքերին զուգահեռ կիրառվում են սովորողների անհատական կարիքներին համապատասխանեցված ուսումնամեթոդական, դիդակտիկ և տեսողական նյութեր, ինչպես նաև անհրաժեշտ գրենական պիտույքներ, հարմարանքներ և այլ պարագաներ |
| Ուսումնական հաստատությունում առկա են ուսումնամեթոդական նյութեր և սարքավորումներ՝ լսողության ու տեսողության գործառույթի բացակայություն կամ սահմանափակում ունեցող սովորողների համար, | Ոչ | Ուսումնական հաստատությունում ներկայումս առկա չեն լսողության և տեսողության գործառույթի բացակայություն կամ սահմանափակում ունեցող սովորողների համար նախատեսված հատուկ ուսումնամեթոդական նյութեր և մասնագիտացված սարքավորումներ, քանի որ հաստատությունում նման կրթական կարիք ունեցող սովորողներ չկան |
| Ուսումնական հաստատության դասասենյակների դասավորվածությունն այնպիսին է, որ ԿԱՊԿ ունեցող սովորողները մեկուսացված չեն, | Այո | Դասասենյակներում օգտագործվում են անհատական սեղաններ և աթոռներ, որոնք հեշտությամբ տեղաշարժվում են: Դրանց շարժականությունը հնարավորություն է տալիս դասասենյակի տարածքը հարմարեցնել ուսումնական տարբեր ձևաչափերի, խմբային և |

| | | |
|---|---|---|
| | | անհատական աշխատանքների, ինչպես նաև սովորողների անհատական կրթական կարիքներին |
| Ուսումնական հաստատությունն ունի ռեսուրս-սենյակ՝ ԿԱՊԿ ունեցող սովորողների համար, | Այո | Ուսումնական հաստատությունում սովորողների կրթական և զարգացման կարիքների ապահովման նպատակով առկա են մասնագիտական աջակցության սենյակներ: Հաստատությունում առկա են նաև լուսային սենյակ, ակտիվ ֆիզկուլտուրայի և սոցիալ-կենցաղային հմտությունների զարգացման համար նախատեսված սենյակներ: Դրանք օգտագործվում են սովորողների անհատական և խմբային աշխատանքների, մասնագիտական աջակցության, ինքնուրույնության, շարժողական, հաղորդակցական և սոցիալ-կենցաղային հմտությունների զարգացման նպատակով՝ հաշվի առնելով նրանց անհատական կրթական կարիքներն ու կարողությունները: |
| Ուսումնական հաստատության ռեսուրս-սենյակ այցելող ԿԱՊԿ ունեցող սովորողների թիվը և տոկոսը, | Այո | Ուսումնական հաստատությունում կրթություն է ստանում ԿԱՊԿ ունեցող 130 սովորող, սակայն կրթական կարիքի գնահատման արդյունքների, յուրաքանչյուր սովորողի համար նախատեսված աջակցության ծավալի և առկա մասնագետների սահմանափակ թվի պատճառով հնարավոր չէ բոլոր սովորողներին լիարժեք ապահովել իրենց ցուցված բոլոր ծառայություններով: Հաստատությունում առկա մասնագետների հնարավորությունների շրջանակում ծառայությունները տրամադրվում են ըստ առաջնահերթության, մասնագետների նախնական դիտարկման արդյունքում, ինչը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր սովորողի ներգրավվել մասնագիտական աջակցության 1 կամ 2 ծառայությունում: Ծառայությունից դուրս մնացած սովորողները թվով 6-ն են, ինչը պայմանավորված է սովորողների հաճախակի բացակայություններով: Այսպիսով դպրոցի սովորողների 95.4 %-ն օգտվում է որևէ ծառայությունից |
| Ուսումնական հաստատության ռեսուրս-սենյակ այցելող ԿԱՊԿ ունեցող սովորողների ծնողների (խնամակալների) թիվը, | 21 | 2025-2026 ուսումնական տարում դպրոցի մասնագետների կողմից վերապատրաստվել և հոգեբանական աջակցության ծառայություններ են ստացել նաև ծնողները |
| Ուսումնական հաստատությունում հաղթահարված են ներառականությունը խաթարող ֆիզիկական խոչընդոտները (թեքահարթակ, հենակ և այլն), | Այո | Ուսումնական հաստատությունում ապահովված են սովորողների տեղաշարժի համար անհրաժեշտ հարմարեցումներ: Գլխավոր մուտքի մոտ առկա է թեքահարթակ, 1-ին մասնաշենքի ներսում թեքահարթակներ առկա են երկու կողմերում, 2-րդ մասնաշենքում տեղաշարժման դժվարություններ ունեցող սովորողները հարկերի միջև տեղաշարժվելու համար օգտվում են վերելակից կամ հարմարեցված՝ ցածր աստիճանավանդակից |
| Ուսումնական հաստատությունում հաղթահարված են ներառականությունը խաթարող սոցիալական խոչընդոտները (վերաբերմունք, կարծրատիպ). | Այո | Ուսումնական հաստատությունում առկա չեն ներառականությունը խաթարող սոցիալական խոչընդոտներ, այդ թվում՝ բացասական վերաբերմունք և կարծրատիպեր: Ձևավորված է փոխադարձ հարգանքի, հանդուրժողականության, ընդունման և համագործակցության միջավայր: Մանկավարժական և աջակցող անձնակազմը հետևողականորեն աշխատում է սովորողների և անձնակազմի միջև դրական |

| | | |
|---|---|---|
| | | փոխհարաբերությունների ձևավորման և պահպանման ուղղությամբ |

**16․ Ուսուցիչները կարողանում են ուսումնական ծրագիրը, դասի պլանը, ուսուցանման գործընթացը հարմարեցնել ԿԱՊԿ ունեցող երեխաների կարիքներին և մշտապես խրախուսում են նրանց.**

| Գնահատման չափանիշ | Արդյունք | Նկարագիր, մեկնաբանություն |
|---|---|---|
| Անհատական ուսումնական պլանները մշակվում են համաձայն հանրակրթության պետական չափորոշչի և առարկայական ծրագրերի՝ հաշվի առնելով սովորողների կարիքները, ընդունակությունները, հնարավորությունները, ձեռքբերումները և առաջընթացը, | Այո | Ուսումնական հաստատությունում գործածվում են պարզեցված առարկայական ծրագրեր, իսկ ԱՈՒՊ-ներ լրացվում են բոլոր առարկաներից, բոլոր սովորողների համար՝ հաշվի առնելով սովորողների կարիքները, ընդունակություններն ու հնարավորությունները |
| Այն ուսուցիչների թիվը, ովքեր ունեն դրական դիրքորոշում ներառական կրթության նկատմամբ, | 61 | Դպրոցի ողջ անձնակազմն ունի դրաական դիրքորոշում ներառական կրթության նկատմամբ |
| Ուսուցիչները գիտակցում են ներառական կրթության վերաբերյալ կարծրատիպերի առկայությունը, դրանց վերացման անհրաժեշտությունը և ձեռնարկում են համապատասխան քայլեր, | Այո | Ուսումնական գործընթացում ուսուցիչներն իրականացնում են համապատասխան աշխատանքներ՝ նպաստելով կարծրատիպերի հաղթահարմանը, սովորողների անհատական առանձնահատկությունների ընդունմանը, փոխադարձ հարգանքի և հանդուրժողականության ձևավորմանը |
| Ուսուցիչներն ունեն հավասար վերաբերմունք բոլոր սովորողների նկատմամբ՝ անկախ նրանց միջև եղած տարբերություններից և նրանց առանձնահատուկ կարիքներից, | Այո | Ուսուցիչները ցուցաբերում են անհատական մոտեցում յուրաքանչյուր սովորողի կարիքներին և ունակություններին համապատասխան |
| Ուսուցիչները կարողանում են կարծրատիպեր ամրապնդող վարքագիծ կամ երևույթ հայտնաբերել դասարանում, դպրոցում, ուսումնական նյութերում և նույնիսկ սեփական վարքագծում. | Այո | Ուսումնական գործընթացում ուսուցիչներն ամենօրյա աշխատանք են տանում դպրոցում, դասարանում |

**17․ ԿԱՊԿ ունեցող երեխաները հավասարապես մասնակցում են դպրոցի և դասի բոլոր գործընթացներին՝ ըստ իրենց կարողությունների առավելագույն աստիճանի.**

| Գնահատման չափանիշ | Արդյունք | Նկարագիր, մեկնաբանություն |
|---|---|---|
| Ուսումնական հաստատության այն սովորողների թիվը և տոկոսը, ովքեր ունեն ԿԱՊԿ, | 130 սովորող | Բոլորն ունեն ԿԱՊԿ, 100 % |
| Ուսումնական հաստատությունից հեռացած (ուսումն անավարտ թողած) ԿԱՊԿ ունեցող սովորողների թիվը և տոկոսը, | 0 | 9-րդ դասարանն ավարտել են համակազմում գրանցված բոլոր սովորողները |
| ԿԱՊԿ ունեցող սովորողների բացակայությունների տարեկան միջին թիվը՝ ժամ/սովորող, | 130 սովորող | 6394 ժամ |
| Արտադասարանական աշխատանքների խմբակներում ներառվող և աշխատանքներին մասնակցող ԿԱՊԿ ունեցող սովորողների թիվը և տոկոսը, | 130 սովորող | Մասնագիտական կողմնորոշման պարտադիր խմբակ՝ 16 սովորող:<br>Առողջ ապրելակերպ պարտադիր խմբակ՝ 61 սովորող:<br>(Երեխաների ստեղծագործական ՊՈԱԿ)՝<br>➢Երաժշտության խմբակ 2 սովորող<br>➢Խեցեգործության խմբակ՝ 15 սովորող<br>➢Նկարչության խմբակ՝ 18 սովորող |
| Ուսումնական հաստատության | ՈՉ | Ուսումնական հաստատությանում աշակերտական |

| | | |
|---|---|---|
| աշակերտական խորհրդում ԿԱՊԿ ունեցող սովորողների թիվը. | | խորհուրդ չի ձևավորվել՝ պայմանավորված սովորողների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի՝ ինտելեկտուալ 3-րդ և 4-րդ աստիճանով |

**18. Ուսումնական հաստատության սովորողները գիտակցում են ԿԱՊԿ ունեցող իրենց ընկերների նկատմամբ գոյություն ունեցող կարծրատիպերի վերացման անհրաժեշտությունը և օգնում են փոխել դրանք.**

| Գնահատման չափանիշ | Արդյունք | Նկարագիր, մեկնաբանություն |
|---|---|---|
| ԿԱՊԿ ունեցող սովորողների նկատմամբ հանդուրժողականության ձևավորմանն ուղղված աշակերտական նախաձեռնությունների թիվը և ձևերը, | 0 | ԿԱՊԿ ունեցող սովորողների նկատմամբ հանդուրժողականության ձևավորմանն ուղղված աշակերտական նախաձեռնությունների չեն եղել պայմանավորված սովորողների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի ինտելեկտուալ 3-րդ և 4-րդ աստիճանով |
| Ուսումնական հաստատության կայքում ԿԱՊԿ ունեցող երեխաների կամ հաշմանդամության թեմայով սովորողների կողմից պատրաստված նյութերի, հոդվածների, լուսանկարների և այլ հրապարակումների թիվը. | 24 միջոցառում 11 բաց դաս 9 էքսկուրսիա | Դպրոցում իրականացված բոլոր միջոցառումները, բաց դասերն ու էքսկուրսիաները, նախագծային աշխատանքներն ու պատրաստված պաստառների լուսանկարներն ու դրանց իրականացման գործընթացները հրապարակված են դպրոցի կայքում և ֆեյսբուքյան էջում: Հղումները ստորև. https://mssrc.am/ ttps://www.facebook.com/yerevanspecialschool17 |

**19. Ուսումնական հաստատությունում ապահովված է սեռերի և ազգային փոքրամասնությունների երեխաների միջև հավասարությունը.**

| Գնահատման չափանիշ | Արդյունք | Նկարագիր, մեկնաբանություն |
|---|---|---|
| Սեռերի հավասարության գործակիցը, | 130 սովորող | 37 աղջիկ, 93 տղա |
| Աշակերտական խորհրդում սեռերի հավասարության գործակիցը, | 0 | Աշակերտական խորհուրդ դպրոցում ձևավորված չէ |
| Գերազանց տարեկան առաջադիմություն ունեցող տղաների թվի հարաբերությունը գերազանց տարեկան առաջադիմություն ունեցող աղջիկների թվին, | 0 | Գերազանց առաջադիմություն ունեցող սովորողներ դպրոցում չկան՝ պայմանավորված սովորողների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի ինտելեկտուալ 3-րդ և 4-րդ աստիճանով |
| Տարեկան անբավարար գնահատական (գնահատականներ) ունեցող տղաների թվի հարաբերությունը տարեկան անբավարար գնահատական (գնահատականներ) ունեցող աղջիկների թվին, | 0 | Անբավարար գնահատական ունեցող սովորողներ դպրոցում չկան |
| «Մաթեմատիկա», «Ֆիզիկա», «Քիմիա» և «Կենսաբանություն» առարկաներից տղաների և աղջիկների տարեկան միջին առաջադիմությունը, | 0 | Նշված առարկաները հատուկ դպրոցում չեն ուսումնասիրվում |
| Ուսումնական հաստատությունում սովորող ազգային փոքրամասնությունների երեխաների թիվը և տոկոսը, | 2 | 2-ն էլ ազգությամբ ռուս՝ 1.54 % |
| Աշակերտական խորհրդի անդամ ազգային փոքրամասնությունների երեխաների թիվը, | 0 | - |
| Ուսումնական հաստատությունում սովորող ազգային փոքրամասնությունների երեխաների միջին տարեկան առաջադիմությունը, | 2 | բավարար |
| Անվճար դասագրքեր ստացող սովորողների թիվը և | 13 և 9 | Սովորողների թվով դպրոցը դասագրքեր չի |

| | | |
|---|---|---|
| տոկոսը, | | ստանում, բացառապես 1-ին դասարանցիների, և ուսումնասիրվող առարկաներից դպրոցը ստանում է առարկան դասավանդող ուսուցիչների թվով, որպես ուսումնամեթոդական աջակցության ձեռնարկ: Ստացվող բոլոր դասագրքերը տրամադրվում են անվճար |
| Անվճար սնունդ ստացող սովորողների թիվը և տոկոսը, | 130 | 100 % Դպրոցում սովորող բոլոր սովորողներին սնունդը տրամադրվում է անճար |
| Սոցիալապես անապահով ընտանիքներից սովորողների համար հաստատության իրականացրած սոցիալական աջակցության ծրագրերը և դրանց թիվը, | 0 | Մանկավարժները մշտապես ուշադրության կենտրոնում են պահում խնդրահարույց, սոցիալապես անապահով ընտանիքներին, իսկ տնօրինությունը պարբերաբար կազմակերպում է ծնողական հանդիպումներ՝ փոխօգնության նպատակով: Ըստ անհրաժեշտության անց են կացվում նաև հոգեբանի խորհրդատվություններ |
| Ուսումնական հաստատության կողմից իրականացված՝ ներառական կրթությանն առնչվող արտադասարանական միջոցառումների (զրույցներ, կինոնկարների դիտում, քննարկումներ, կլոր սեղաններ, սեմինարներ, էքսկուրսիաներ և այլն) թիվը՝ ըստ դասարանների: | | Տարվա ընթացքում պլանավորվել և իրականացվել են ինչպես դասարանական այնպես էլ արտադասարանական միջոցառումներ |

2025–2026 ուսումնական տարում վերապատրաստված մանկավարժների առկայությունը, ընտանիքի և համայնքի հետ համագործակցությունը, ինչպես նաև հաստատությունում առկա ուսումնական և ուսումնամեթոդական ծրագրերը նպաստեցին ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը և սովորողների կրթական կարիքներին համապատասխան աջակցության ապահովմանը:

Ուսումնական գործընթացը կազմակերպվել է սովորողների անհատական առանձնահատկությունների, կրթական կարիքների և ԱՈՒՊ-ով սահմանված նպատակների հաշվառմամբ:

Հաստատությունում իրականացվող մանկավարժական, մասնագիտական և աջակցող աշխատանքները նպաստել են սովորողների ուսումնական, հաղորդակցական, սոցիալական, ինքնուրույնության և առօրյա կյանքի հմտությունների զարգացմանը:

Ընտանիքի հետ համագործակցությունն ապահովել է սովորողների կրթության և զարգացման վերաբերյալ տեղեկատվության փոխանակման, խնդիրների համատեղ քննարկման և անհրաժեշտ աջակցության կազմակերպմանը:

Ներքին գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ առկա են նաև բարելավման ենթակա ուղղություններ: Մասնավորապես՝ անհրաժեշտ է շարունակել մանկավարժների մասնագիտական զարգացման և վերապատրաստումների գործընթացը, ընդլայնել ընտանիքի և համայնքի հետ համագործակցության ձևերը, ապահովել ուսումնամեթոդական նյութերով և անհատական աջակցող միջոցներով ու սարքավորումներով, ինչպես նաև առավել ամբողջական ապահովել սովորողներին իրենց կրթական կարիքներին համապատասխան նախատեսված մասնագիտական ծառայություններով:

Ընդհանուր առմամբ, հաստատությունն ունի սովորողների կրթական կարիքներին համապատասխան կազմակերպչական և մասնագիտական հիմք և ապահովվում են սովորողների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի ինտելեկտուալ 3-րդ և 4-րդ աստիճանով պայմանավորված առնվազն գիտելիքների հնարավոր նվազագույն մակարդակի յուրացումը: